

*ՀՐ. ՄԻՄՈՆՅԱՆ*

**ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
«ՀԵՐՈՍԱԿԱՆ» ԷՋԵՐԻՑ  
ՄԵԿԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ,  
2014**

ՀՏԻ 93/99  
ԿՄԻ 63.3  
Ո 504

Սիմոնյան Հր.

Ս 804 Ազգրեջանցիների պատմություն «Հերոսական» էջերից մեկը  
լուսանկարներում/ Հր. Սիմոնյան.- Եր.: ԵՊՀ հրատ., 2014.- 84  
էջ:

Քրթում ներկայացված են Բարվում 1905 թ. փետրվարին  
ազգրեջանական ազգայնամոլների կողմից քաղաքի խաղաղ Հայ  
ընկալության դեմ սանձազերծված արյունալի ոճրագործությունները  
և Հայերի արժանի հակահարվածը: Առաջին անգամ տպագրվում են  
այդ արյունալի դեպքերը պատկերող փոփոխված փոխադրեր:

ՀՏԻ 93/99  
ԿՄԻ 63.3

ISBN 978-5-8084-1907-0

© Հր. Սիմոնյան, 2014

© ԵՊՀ հրատ., 2014

Անաստոլիական թուրքերի կողմից Հայոց մեծ եղեռնի հարյուրամյակի օրերին մենք ակամայից վերհիշել ենք դրանից մեկ սուսնամյակ առաջ հայերի նկասումամբ նրանց ազգակիցների արյունալի սհրապարծություններից մեկը Անդրկովկասում:

1904 թ, Հունիսի 26-ին սկսված առևճատարնական պատերազմը առաջին խակ օրերից անհաջողություններ բերեց ռուսական դորքերին: Նրանք ծանր պարտություններ կրեցին Մուկղենում, Պորտ-Արտուրում, կովի բոլոր հատվածներում, նաև ծովի վրա:

Ռուսական զորքերի մինչ այդ չտեսնված ջախջախիչ պարտությունները կայսրութունով մեկ առաջ բերեցին ժուրավորական հուզումների հակայածավալ ալլը, այդ թվում՝ Անդրկովկասում, հատկապես նրա արդյունաբերական խոշոր կենտրոնում՝ իր բազմազգ բնակչությամբ:

1908 թ, Բաբու քաղաքում և շրջակա նավթահանքերին կից բնակավայրերում մշտական և ժամանակավոր ապրող բնակիչների ընդհանուր թիվը հասնում էր 240 հազարի: Ազգապարտական սեռակետից պատկերն այսպիսին էր. մահմեդականներ (անդրկովկասյան թուրքեր, պարսիկներ և պարսկահայաստակ թուրքեր, լեզգիներ, Կազանի թաթարներ և այլք)՝ շուրջ 90 հազար, ռուսներ՝ 61, հայեր՝ 51, օսեր՝ 7, վրացիներ՝ 3, գերմանացիներ՝ 3, հրեաներ 3, հույներ՝ 1, լեհեր՝ 2, ասորիներ, արբասյաներ, հասոնացիներ՝ 2 հազար,

կային նաև ֆրանսիացիներ, անգլիացիներ, չվեդներ և այլ ազգերի ներկայացուցիչներ<sup>1</sup>:

Բարվում գործում էին սարբեր քաղաքական կազմակերպություններ՝ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական ընկերական կուսակցություն (ՌՍԴԲԿ), Լսչոներ և անարխիստներ: Բարվի հայ ընկալության տարրեր խավերի մեջ մեծ ազդեցություն ունեին հայկական ազգային հեղափոխական կազմակերպությունները և առաջին հերթին Հ. Յ. դաշնակցությունը, ինչպես նաև հնչակյանները:

Պետերբուրգյան բյուրոկրատիան Կովկասում ամենահեղափոխական տարր էր համարում հայությունը: Նույնիսկ լալրասկզբին այս երկրամասի նկատմամբ լրենց քաղաքականություն մեջ ցարական իշխանություններն առաջնորդվում էին Լորանով-Ռոստովսկու զաղափարներով՝ շարունակելով ուսուսացման դաժան քաղաքականություն, որը հանձնված էր իշխան Գոլիցինի երկաթյա զավաղանին: Դա հասկապես ծանր նսույց ազգային բարձր լինքություն հասած հայություն վրա՝ նրան բերելով բողոքում աղետներ: Կովկասի գոլիցինյան վարչակարգը դաժանորեն հալածում էր երկրամասում ապաստանած սուսնյակ հալարավոր թուրքահայ պալթականությունը, բունությունը խավանում կովկասահայություն կողմից նրա համար արվող ամեն հանգանակություն, ծանրակուռ սանձ էր դրել հայկական խնդրի մասին մտածող հայ գործիչներին լեզվին, ավազակաբարո

---

<sup>1</sup> Տե՛ս «Искра», № 24, 1 сентября 1902, տե՛ս նաև Ա-ԴՈ, Հայ-թուրքական ընդհարումը Կովկասում (1905-1906 թթ.): Փաստագրական, վիճակագրական, տեղագրական լուսարանություններով, Երևան, 1907, էջ 13:



կերպով իրականացրել հայ եկեղեցու սեփականությունը բունապրավելու մասին ցարական օրենքը, սահմանապահ առև Կլինվորները, սահմանակ սակյարները հետև ձևով ձևով սոված, կովկասյան սահմանները վրա նրա վիսուլթյամբ ու կարգադրությամբ գնդակի էին բունել և արյունալի սպանդի ննթարկել Սասունի ապստամբ հայերին օգնության շտապող արչավախմբերի մասնակիցներին և այլն:

Եվ ահա այժմ Պետերբուրգի բանվորության 1905 թ, հունվարի 9-ի արյունալի սպանդից հետո, Կովկասը նույնպես սկսեց էր փոթորկվել:

Պետերբուրգի կոստալորությունը Կոնստանտին էր, որ Կովկասում «անկարգությունների պլանավոր մեղավորը հայերն են», որոնցից սերել են արմատական հեղափոխական ազգային կոստալորություններ, հայերն են Կովկասում առատական սոցիալ-դեմոկրատական շարժմանը ստալիս ղեկավար կապիտիլի գալի մասը, նրանք են, որ բացահայտ պայքարի պուղ են պարզել իշխանությունների դեմ՝ չհամակերպվելով իրենց եկեղեցու ունեցվածքը հարքունիս պրավելու մասին ցարի ստորագրած օրենքին և այլն:

Հայերի «մեղքերը» ներում չունեին, ուստի պակաս չէին սահման չճանաչող բունկուծները և չարակամությունը:

Ուսումնասիրելով ու վերլուծելով հայ հասարակական կյանքի վարպապման ընթացքը՝ ցարական քաղաքագետները հանգել էին այն եզրակացություն, որ սոսանելի ապագայում հայկական հասարակության վարպապման սրամաբանական հանգուցարուծումը լինելու է ինքնավարության պահանջի առաջադրումը՝ հայկական քաղաքական ակտիվություն կարելիություն սահմաններում: Նրանց մեջ համոզմունք ձևավորվեց, թե այդ ընթացքը կանգնեցնել դժվար է

լինելու, եթե չուտով ձեռք չառնվին անհրաժեշտ ճնշամիջոցներ:

Հայկական ինքնավարութեան պահանջը, լրատվամիջոցներին, լինելու էր Անդրկովկասի համար ինքնավարութիւն ձեռք բերելու պահանջի մի մասը: Հետեապես երկրամասի ժողովուրդներին պառակտման պայմաններում ընդմիջու կլնաղվելու ոչ միայն Հայկական, այլև Անդրկովկասի ինքնավարութեան պայմանադրութիւնը:

Հայկական ինքնավարութեան՝ գոյութիւն չունեցող պաշտօնակարի դեմ արշավանք էին սկսել *“Московские Ведомости”*, *“Новое Время”* և բողոքաբան մարդասիրտ դաշտաբաններ սերմանող հետադեմ մամուլի այլ օրգաններ: Դրանցից հետ չէր մնում նաև Կովկասի կառավարչութեան պաշտօնական օրգան *“Кавказ”* թերթը:

Մամուլի այդ պաշտօնակարիքները քանակ էին, որ Հայկական ինքնավարութեան դաշտաբանը հենվում է Կովկասում Հայկական կապիտալի հզորութեան վրա: Երկրամասի արդյունաբերական ներկան և նրա ապագան որոշ ժամանակ անց կարող էին դառնալ Հայ կապիտալի մենաշնորհը: Դա բնական դեպքութիւն էր ստացուելու Անդրկովկասում առաջ արդյունաբերողներին և ընդհանրապես առևտրական կապիտալի ներկայացուցիչների մեջ: Նրանք քննադատում էին կառավարութեանը, որ չի կարողանում մրցակցային պայքարը «կանոնավորել», ասել է թե՛ ապահովել առևտրական կապիտալի լիակատար գերազանցութիւնը:

Յարժան կառավարութեանը պատրաստակամ էր չարագործութեան մղել մուսուլմանական հասարակութեան մութ ուժերին, քաջալերել սպանութիւնները և այդ միջոցով սպանել ժողովրդական ուժերը, մարել հակապարական բուրբուք-

վող կրակը, գանգվածներին ստիպել ձեռք քաշել Հակակա-  
ռավարական գործողություններից, գերծ պահել սկսված  
ուսսական հեղափոխությանը մասնակցելու հնարավորու-  
թյունից: Այդ դիվային դերը ստանձնել էին ուսսական վար-  
չակարգի ներկայացուցիչները՝ Բաքվի նահանգապետ Մի-  
խայիլ Նակաչիձեն, Բաքու քաղաքի և չրջանի ոստիկանա-  
պետ Ֆյոդոր Դիմիտևսկին, նավթաչրջանի ոստիկանապետ  
Յուրիան Ուոնցկին, Հանրային ապահովության տնօրեն  
(ժանդարմերիայի պետ) իշխան Թավրերիձեն:

Հենց պապանաբարս անձանց խրախուսանքով ու  
ղղմամբ 1905 թ. փետրվարի 6 (13)-ին՝ կիրակի օրը, Բաքվի  
ալլբեջանցի-թուրքերի և հայերի միջև բռնկվեցին ալլունա-  
լի ընդհարումներ, որոնք տևեցին չորս օր: Լուսկուծյան և  
ոխի Հրդեհը տարածվեց քաղաքով մեկ:

Այս ու այն տեղերից վնասված խմբերով հանկարծակի  
փողոցներ էին նետվում թուրք լոչլբաչիներ և աջ ու ձախ  
սրախոլիտով անում հայ անյորլներին: Մտածամանակ թուր-  
քերի սնների պասուզամբներից ու լուսամուսներից հայերի  
վրա տեղում էին դնումներ լուսարտի:

Բոլոր կողմերից կրակոցներ էին լսվում: Փողոցներում  
վայրագուծյուն անող ամբոխը կոստում էր խանութների  
դռներն ու պատուհանները և թալանում սալրանքը: Փո-  
լոցներում այստեղ-այնտեղ հանվուսու կանգնած են կարգա-  
լլիչ կազակներն ու ոստիկանները. կողոպտիչների ձեռքը ոչ  
ոք չի բռնում, ոչ ոք նրանցից չէր խլում ո՛չ գեներ, ո՛չ  
թալանը:

Իրաբարձուծյունների ուսս մասնակիցներից մեկը վեր-  
հիչել է. «Ամբոխը ավերելով՝ ներս խուժեց Սահակովի տան  
ներքևի հարկում գտնվող խանութը: Ես բնակվում էի այդ

տանր: Հենց խանութի վերևի երկրորդ հարկը զբաղեցրած հայկական ընտանիքը սարսափահար վազեց մեզ մոտ: Ես նրանց առաջարկեցի գլխերել լո՞ւմ բնակարանում, իսկ ինքս գանգահարեցի նահանգապետի դիվանատուն և պահանջեցի, որ պահակախումբ ուղարկեն: Իմանալով, որ պահակախումբ պահանջույլը ռեալական ուսումնարանի ուսուցիչ է, խոստացան կազակներ ուղարկել: Մոտ 10 րոպե անց կազակները եկան, և ամբոխը ցրվեց: Ես փողոց դուրս եկա տեսներու, թե արդյո՞ք մնալու է պահակախումբը: Հենց նոր էլ ոտքս դրել մայթին, երբ կազակներն անմիջապես շրջեցին ձիերի գլուխները և հեռացան: Իմ խնդրանքներին, որ գոնե մի վոքը պահակախումբ թողնեն, ես ոչ մի պատասխան չստացա: Կազակները գնացին»<sup>1</sup>:

Թիֆլիսում յույս սեանույ *“Новое Обозрение”* թերթը տպագրել էր մի ոռոս մարդու՝ Օրեստ Այոմինի թղթակցությունը, որում այսպիսի տողեր կան.

«Իմ տանտերը վախենում է, որ գլխերը թուրքերը կհարձակվեն իր բնակարանի վրա ... Հայերը վախենում են սենյակից Կուրս գալ, որտեղից այժմ կարելի է լսել ալլալուրմ հեծեծանքներ և սեանել անմխլթալ արցունքներ՝ սպանված և վիրավոր ազգականների պատճառով: Ո՛րք՝ ոռոսներս, որ հանդիմանում ենք քաղաք Կուրս գալ, ծառայում ենք հայերին, և ով ինչով կարող է՝ թեթևացնում է նրանց ահամա բանտարկությունն իրենց բնակարաններում... Իրբ ես զրում եմ այս սուղերը, ահանջիւ հասնում են հրաձգություն ձայներ, և երևակայելով, թե ինչ է լինելու գլխերը, ես պասակերացնում

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 383, թ. 27.

եմ թուրքական գազանությունների ծանոթ սեփականները, և սարսափը սփրում է հոգուս ...»<sup>1</sup>:

Դնարով ուժեղանում էր հրացանաձուլությունը քաղաքի տարրեր մասերում: Թուրքերը, խմբերի բաժանված, ուղղվելներով և հրացաններով վրնված, ուր ուր հայի էին պատահում, խփում, սպանում էին: Թուրք կոփողների հետևից ստանում էին վրնամթերքի արկղեր, որպեսզի վամվուշալի պաշարը չպակասի:

Երբ ջարդարար խուժանը տեսավ, որ հայ բնակիչները վազվել են լրենց սներում և լուրս չեն գալիս վողուց, առաստնավթ ցանելով՝ սկսեց հլրլհհել սները՝ բնակիչներով հանդերձ:

Ավելի շատ էր այն սների թիվը, որոնց դարպասներն ու դները սապալելով՝ ջարդարարները ներս էին խուժում, քարուքանդ անում ամեն ինչ, կոտորում այնտեղ գտնվող ղրախտներին, ապա սկսում թալանը: Կողոպուտից հետո հայերի սներն ընդհանրական պատկեր ուներին՝ լատարկ ու պղծված սենյակներ, վշրված առարկաներ, ջարդված ամանեղեն, այս ու այն կողմ շարտած վանաղան էժանագլին լրեր:

Հասկապես անտանելի էր այն հայերի դրությունը, որոնք ապրում էին Բալախանսկայա փողոցից այն կողմ ընկած թուրքական թաղերում՝ նիկոլանսկայա փողոցի վերին հատված, Ձեմբերեքենդ, Մամախու թաղ, Ղուբայի հրապարակ, և դրանց մերձակայքում: Թուրք հոծ բնակչության մեջ հայերը քիչ չէին նաև Բերդ անվանված հին լարիրինթոսում:

---

<sup>1</sup> “Новое обозрение”, 10 февраля 1905 г.

Նկատի ունենալով թուրքական թափերում փետրվարի 6-ին կատարված խժդժությունները՝ “Новое Обозрение” թերթի Բաքվի թղթակիցը գրում էր. «Թե ինչ էր կատարվում այնտեղ՝ խորքում, Բաղարնի և Շամախու փողոցներում, հայտնի չէր... Հետվից երևում էր միայն թուրքերի փափախները մի ամբողջ ծով, և լսվում էր ամբողջի վայրի ոտնոցը... Իրեկոն վրա էր հասնում, և բոլորը սարսափով սպասում էին «Բարդուղիմեոսյան գիչերին» ... Քիչինչովի աղյուծահեղությունն սարսափները ոչինչ են՝ համեմատելով այս բոպին մեղանում կատարվածների հետ: Չէ՞ որ այնտեղ (թուրքական թաղերի խորքում: – Հ.Ա.) աղմկում, ալերսում է անպեն հայ ամբոխը, իսկ այստեղ համարյա բոլորը, առանց բացառություն, գլխած են հյապեններով, խենջարներով, յաթաղաններով և այլ մահաբեր պենքերով»<sup>1</sup>:

Ահա երեսնամյա մայթին ընկած մի պատկ, իսկ թիչ այն կողմ՝ մահվան հոգեվարքի մեջ դաշտոնահար մի ուրիշը: Ահա վուրոց Գուրա եկող Գարաբախի առջև երևում է աղյան մուգ-կարմիր դանգված... Ուրեմն այստեղից ոչ հեռու՝ բակում կամ ներքնահարկում, մորթել են մարդկանց... Լեռնթեմուռյան արհավիրքը վոթուրկի պես պայթել էր անպեն ժողովրդի պլաին՝ չորս կողմը սվոներով պոակները կույսեր, կակիծ ու հառաչանք, նպովք ու քասում:

Նույնրան ահախոր էր իրենց աշխատավայրերում ու հյուրանոցներում փակված հայերի վիճակը: «Լեռյունահեղ սպանդանոցը Բաքվում» վերնագրով իր հուշերում Բաքվի քաղաքային վարչության ֆինանսական բաժնի նախկին աշխատակից Նիկոլայ Նաջարովը գրել է. «Կիրակի օրը,

<sup>1</sup> “Новое обозрение”, 10 февраля 1905 г.

փետրվարի 6-ին, ես, որպես ծառայող, գտնվում էի վարչությունում: Առավոտյան ժամը 10-ի կողմերում հանկարծ լավեցին կրակոցներ, և մի քանի րոպե հետո նիկոլայան փողոցում հայտնվեցին թաթարների դինված խմբեր: Բոլորի ձեռքին փայլում էին սևովերներ: ... ոչ ոքի, բացի հայերից, ձեռք չէին տալիս: Մի ժամ հետո վարչությունում մնացել էին փակված միայն հայերը և մեկ թուրք, որը, նման լինելով հայի, վախճանում էր փողոց դուրս դուրս:

Քիչ հետո գալիս է քաղաքապետիս: Մենք բոլորս շրջապատեցինք նրան և աղլուղում խնդրեցինք օգնություն, քանի որ վախենում էինք հարձակումից: Նա սկզբում դարձապես և ասաց, որ այդ ամենը դատարկ բան է, որ ոչ ոք ձեզ ձեռք չի տա, որ ինքն արդեն առավոտվանից անցնում է փողոցներով, և ոչ ոք իրեն ձեռք չի տալիս: Վերջապես, մեր շատ թախանձանքներից հետո նա խոստացավ մեր խնդրանքը հաղորդել նահանգապետին: Մենք խնդրեցինք նաև սալ չորս կապակներ՝ վարչության րաները պաշտպանելու համար: Քաղաքապետիսը հեռացավ, և մենք այլևս նրան չտեսանք: Դրանից հետո մենք նրան մի քանի անգամ դիմեցինք հեռախոսով, բայց՝ զուր: Վերջապես հեռախոսավարուհին կենտրոնից ասաց ինձ. «Դուք, ինչ է, չե՞ք տեսնում, որ քաղաքապետիսը չի ուղում խոսել ձեզ հետ»: Որոշ ժամանակ անց փողոցում հայտնվեցին կապակներ, մենք լուսամուտաներից նրանց խնդրեցինք օգնություն փող: Կապակները ներքևից պատասխանեցին. «Մեզ հրամայված չէ կրակել, մեզ թույլատրված է միայն հավաքել սպանվածներին»:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 120, թ. 2:

«Խալամիե» անունով հյուրանոց մտած մարդասպանները ծառայողներից պահանջեցին ցույց սալ, թե որտեղ են ապրում հայերը: Մերժում ստանալով և չկարողանալով ձևոք պցել բանալիները՝ նրանք կոստրեցին դռները, խուժեցին սենյակները և սրի քաշեցին սրասահած հայի: Սուզարկելով ամբողջ շենքը՝ նրանք որսում էին նկուղային հարկի մութ անկյուններում թաքնված զժբախսաներին և սեղևուտները սրակտողկտող անում: Միայն մի քանիսին հաջողվեց թռչել պատուհաններից և ազատվել փախուստով<sup>1</sup>:

Նույն բախտին արժանացան փախչողներում խոնարհ՝ կրսուրածից մազապուրծ և այլ հյուրանոցում ապաստանած հայերը: Ականատեսները վկայում էին. «Մեր աչքի առջև թաթարները կոստրում էին բանից անսեղյակ հայերին, որոնք գնում էին լրենց սովորական աշխատավայրերը: Նրանցից մոտ 30 հոգի հասցրեց ապաստանել «Խալամիե» հյուրանոցում, բայց պապանապած մարդասպանները նրանց հետևից ներխուժեցին շենքը և գլխովին սրի քաշեցին: Ազատվեց միայն չորս հոգի՝ հյուրանոցի թուրք սվրաջ ջանքերով»<sup>2</sup>:

Հայերին հանկարծակիի բերելով՝ թուրքերը կարողացան շատ արագ իրենց հսկողության տակ առնել Շամախինկա թաղը, որի բնակիչների 80-90 տոկոսը մուսուլմաններ էին, Արմյանսկայա և Վորոնցովսկայա փողոցների մեծ մասը, Պարապետից մինչև ծովափ ընկած հատվածը, Տելեֆոննայա փողոցը՝ Սև քաղաքի կողմից:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 120, թ. 3:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 234, թ. 10:



Ջարդարացիներից մեկը՝ նախկին սրբապետ Սպիրիդոնովը, Հեռախոսով հայտնեց ոստիկանապետին, թե հայ և ռուս բանվորները միավորվել են և պատրաստվում են ձեռնարկել ակտիվ գործողություններ: Ահա նրանց խոսակցությունների բովանդակությունը, որը ժամանակին գրի է առել ռուս քաղաքացիներից մեկը.

«Ռուսը՝, թանկապիստ,- ասում է Սպիրիդոնովը՝ անուն-հայրանունով դիմելով ոստիկանապետին: - Իմ ձիավորներն ինձ լուր են բերել, որ Բեյրաթում հավաքվում են հայ և ռուս բանվորները և ուղում են քաղաք գնալ: Մենք պետք է միջոցներ ձեռք առնենք:

- Մի՛ հավատացեք, դատարկ բան է: Ես Հեծյալ պարեկներ եմ ուղարկել Բեյրաթ: Անհանգիստ են, բայց վախենալու կարիք չկա:

- Չէ՛, հավատացեք, ինչ որ ասում եմ՝ ճիշտ է: Նրանք հավաքվել են այնտեղ՝ հոկտեմբերի 300-400 հոգի և այդտեղ շարժվում են դեպի քաղաք:

Ոստիկանապետը խստորեն ու շարունակյալ ասաց,

- է, թո՛ղ դան: Մեր զինվորների վաշտն ու կազակների հարյուրակն այնտեղ պատրաստ կանգնած են: Մենք նրանց բոլորին շանսասուակ կանենք»<sup>1</sup>:

Արդեն փետրվարի 6-ի երեկոյան անջատվել էին շատ հայերի և ռուսների Հեռախոսները: Ահա թե ինչ է ասել քաղաքի ռեպրեզենտանտ ուսումնարանի դասատուն. «Փետրվարի 6-ին հեռախոսիս ինչ-որ բան պատահեց: Որքան փորձեցի վանպահարել կենսությունական կայան, ոչ մի կերպ չկարողացա-

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 383, թ. 28:

ցա: Հետո իմացա, որ նման բան է պատահել շատերի, ատանձնապես հայերի հետախուսների հետ, ուրոնցով վարձում էին դիմել իշխանությունը»<sup>1</sup>:

Ջարդի հենց սաստիկն օրը սրբոց դարձալ, որ իշխանու-  
թյան բոլոր մարմինները՝ քաղաքացիական թե զինվորա-  
կան, պործում են ուղռակի ծրագրով և նպատակամղվածու-  
թյամբ: Գործողու թյունների բոլոր թեկերը գտնվում էին նա-  
հանգապետի ձեռքում: Հայերի օգնու թյան բոլոր խնդրանք-  
ներին նա նույն բանն էր կրկնում. «Ոչինչ անել չեմ կարող,  
զորք չկա»: Եվ դա այն ղեպքում, երբ նախորդ ամիսների  
բանվորական ցույցերի ժամանակ քաղաքում ելած ուժերը  
բավական էին լինում մեկ-երկու ժամում ցրելու ցուցարար-  
ներին: Կոստրածի ժամանակ, սակայն, այդ ուժը «չքացել»  
էր:

Այդ քառու մեջ, բանությունները ու ըսցի այդ սուրսու-  
րսում, եթե չհաշվենք ատանձին անհասները, չկային  
համախմբումներ, ուրոնք պեթ կարեկցանքի ձեռք մեկնելին  
հրեշային դավադրություն գոհերին, անհուգ հանդիսասուսի  
դերում էին, բացառությունը ուսաների մի մասի:

Համասարած այդ անսարբերությունն էր պատճառը, որ  
հայերի կողմից թուրքերին ուղղված խաղաղության հուրը-  
ները, հաշտության կոչերն ու խրատները մնում էին արհա-  
մարհված ու ապարդյուն<sup>2</sup>: Մորդկույին տրոսնորսնու թյու-  
նը, խլղճն ու բարոյականությունն անհարկը էին գաղաղած  
խուժանի հանրուզն ու անպատիժ արյունուս խրախճանքին:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 383, թ. 28:

<sup>2</sup> Տե՛ս Հայկ Ասատրեան Հայաստան արիական նախադիրք Առաջա-  
վոր Ասիայում, Սոֆիա, 1942, էջ 66:

Թուրքերի տմարդի Հարձակումը Հանրապետակի էր բերել քաղաքի հայկական համայնքի ղեկավարությունը, նաև՝ Ն. Յ. Դաշնակցությունից Բարձր կենտրոնական կոմիտեին:

Միքայել Վարանդյանը գրել է. «Աղետն այնքան անակնկալ էր, որ Ն. Յ. Դաշնակցությունից կազմակերպությունը նույնպես չչմն էր և կորցրել զլուխը: Ուժերը ցիր ու ցան էին, կախող սալրերու մեծագույն մասը կը գտնվեր չրճակա վայրերուն մէջ՝ Սև քաղաք, Բալասանի և այլն: Նրանց կենտրոնացումը խիստ ղովարին էր, քանի որ ոստիկանությունը կորել էր ճանապարհները, արդելում էր հայերի հոսանքը շրճաններից դեպի քաղաք, կամ եթէ թուշասուրում էր, ապա վինաթափ էր անում քաղաք եկուղներին, մինչդէռ թուրք սալրը երթեւեկում էր ազատուէն եւ վնասուած»<sup>1</sup>:

Իհարկէ, անակնկալն այնքան գարհուրելի ու այնքան կորստաբեր չէր լինի, եթէ հայերը նվազ հաժառ սածելին թուրք դրացու բարեկամությունից հանդեպ:

Փետրվարի 6-ի երեկոյան Դաշնակցությունից Բարձր կենտրոնական կոմիտեն նահանգապետ Նակաչիճեին սուղարկեց հետևյալ սպառնապիտը.

«Պրն նահանգապետ.

Քաղաքում մի բանի ժամ շարունակ տեղի ունեցած արևունալի դէպքերը մեզ ներշնչեցին մի կարծիք, որը մեզ յամար դառնում է յամոզմունք, որ թափուած ամբողջ արեան պատճառը Դուք էք և Ձեզ ենթակա ոստիկանությունը: Հարկավոր չհամարելով ապացույցներ բերել Ձեր յանցագործ

---

<sup>1</sup> Միքայել Վարանդեան Ն. Յ. Դաշնակցությունից պատմություն, հատ. Բ, Թեհրան, 1981, էջ 45:

վարձունքի յամար, որը բազմաթիւ անմեղ մարդկանց կորստեան պատճառ եղաւ, հայ յեղ. դաշնակցութեան կենտրոնական կոմիտէն, նախքան իւր վրա դրած սրբազան պարսականութեան կասարմանը ձեռնարկելը, այն է՝ պաշտպան յանդիսանալ անմեղ զուհիներին, ավելորդ չի համարում յայտարարել Ձեզ, պրն. նահանգապէտ, որ եթէ Ձեր ձեռքում եղած բոլոր միջոցներով արյունահեղութիւնը չէք դադարեցնի, այդ դէպքում դուք պատասխանատու էք Ձեր և Ձեր մեղսակիցներին արիւնով:

Հ. Յ. 'Ի. Բարձրի կենտրոնական կոմիտէ»<sup>1</sup>:

Հանցաւորներին պատժելու վճռաբար խնդիր էր կազմակերպութեան համար: Թուրքերի կողմից կատարվող նախնիքի պահին էր, որ ծնունդ առաւ հայերի վիճաւորութիւնը: Փետրվարի 6-ին հանկարծակիի եկած հայերը հաջորդ օրը՝ փետրվարի 7-ին, աստիճանաբար ու շքի էին գալիս: Հ. Յ. դաշնակցութեան կենտրոնական կոմիտեն որոշեց հակադարձել իւր սուրմարտութեան սակ եղած բոլոր միջոցներով:

Այդ ճակատագրական պահին անպատահաբար եղաւ հին հայրուկ, դաշնակցութեան նշանավոր ռազմական գործիչ Նիկոլ Գումանի (Նիկոլ Տեր-Հովհաննիսյան) վճռորոշ դերը:

Գուման, ... տառապալ ժողովրդի արիասիրտ ու ազնիւ վաճակներով մեկն է, որի կյանքը մի պայքարի վրայ էր դրուած իւր մարտնչական զինով: Միշտ անվերապա ու անընդհատ վաստակ էր լցված դեպի ազգային հեղափոխութեան հաղթանակը, հեղափոխութիւն, որ նրա համար դարձել էր նվիրական պաշտամունք:

---

<sup>1</sup> Ա. Գյուլիանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. II, Փարիզ, 1933, էջ 14:

Երբ ջարդին սկսվեց, Գուժանը փոստում էր Բապտիստների նավթահանքերի շրջանում, ուր նա աշխատում էր ուրպես Արշակ Ղուկասյանի նավթահանքերի կառավարիչ: Արրահամ Գյուլխանդանյանը Հեռախոսի մոտ է կանչում Գուժանին և նրան հայտնում, որ Թուրքերը քաղաքում սկսել են ջարդել հայերին, և որ քաղաքի իշխանությունները, որոնց ձեռքի տակ այդ ժամանակ 6000-ի հասնող ռուսական զորաբաժին կար, ոչ մի միջոց ձեռք չեն առնում արվելք հանդիսանալու արյունահեղությանը: Լուրն այնքան անսպասելի էր, որ Գուժանը սկզբում կարծում է, թե Արրահամը կատակ է անում և ուզում է իրեն մի կերպ քարշ տալ ժողովի:

Արրահամի լուրջ պնդումներից հետո Գուժանը շտապեց Թաքու հասնել հանքերը քաղաքի հետ կապող երկաթուղով, բայց պարզվեց, որ երկաթվիծը կտրված է Թուրքերի կողմից: Ուստի նա լծում է ձիակառքը և, հետը վերցնելով մարտիկներից մեկին, Թուրքական պուլերի միջով խակոյն մեկնում է և, 20 կիլոմետր ճանապարհ կտրելով, փեարվարիկ-ի երեկոյան հասնում է քաղաք:

Տեղ հասնելուն պես Գուժանը, ստանց ժամանակ կորցնելու, հապշտապ ձեռնարկում է Թաքվի հայություն ինքնապաշտպանության կազմակերպման գործը՝ Բաահակ Մեղվեյանի «Ռեմբրանտ» նկարչատունը, որը փոստում էր Տարսուկայա և Մարինակայա վտղոցների անկյունում, դարձնելով կենտրոնատեղի: Այդ պահին նա իր տրամադրության տակ ընդամենը ուներ յոթ հոգուց բաղկացած գինված խումբ, բայց գիշերն իսկ կարողանում է կազմակերպել և ի մի բերել 60 կովոզների, որոնք պետք է առավոտյան պաշտպանեին հայկական թաղերը: Տղաների մեծ մասն առանց ղեկքի էր, մնացածների ձեռքին մի քանի ստորձանավորներ էին՝ հիմնա-

կանում «Բորխարդ» և «Սմիտ-Վեսեն» մակնիշի:

Երկրորդ օր, փետրվարի 7 (20), երկուշաբթի:

Գիշերն անցավ համեմատաբար հանգիստ: Ոչ ոք չէր կարծում, թե դեպքերը կարող են վերսկսվել: Բայց գիշերային խավարի մեջ ընկղմված սարսափների քաղաքը քնած չէր, ջարդարարները անզորձ նստած չէին: Քաղաքի մի քանի շրջաններում անսուսանելի ձեռքեր մուսուլմանների սներին նշան էին անում՝ «Յա ալլահ» («Աստծո հետ»), իսկ ոռուների տների վրա «Ուրուս» («ոռուս») մակագրություններով: Դա նշանակում էր, որ առանց նշանների տները հայերին են և ենթակա են ոչնչացման<sup>1</sup>:

Փետրվարի 7-ի առավոտյան Բաբուն կարծես սկսեց ապրել սովորական կյանքով: Մարդիկ շտապում էին աշխատանքի, բացվեցին խանութները, արհեստանոցներն ու կրպակները: Քաղաքը վերստացավ իր սովորական կերպարանքը:

Բայց առավոտյան ժամը 10-ից նորից վիճակը փոփոխեց: Հայոց եկեղեցուն հարակից Պարապետ հրապարակից սկսվող և դեպի մուսուլմանական թաղ սահող հասվածում հանկարծ հայտնվեց հրացանը ձեռքին մի թուրք ձիավոր, որն սկսեց աջ ու ձախ կրակել և վարպով սլանալ դեպի մուսուլմանական թաղում զտնվող Ղուրի հրապարակը: Անմիջապես ամեն ինչ խտտնվեց, ծուր ստավ խուճուղը:

Հրացանաձգությունն այս անգամ արդեն սկսվեց ոչ թե կենսադրոնից, այլ քաղաքի այն մասերից, ուր գտնվում էին թուրքերի թաղերը:

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, Կ. 136, թթ. 40-41.

Սարսափ ու տազնապ, վայրկենապես փակվեցին խանութներն ու արհեստանոցները, ամայացան փողոցները: Ով կարողացավ՝ լրեն սուռն պցեց, ով չկարողացավ՝ մնաց խանութում, պրասենյակում, մի խոսքով, ուր որ գտնվում էր այդ ընտանիքի անդամները՝ միմյանցից բաժանված, միմյանց կացութիւնից անսուրջակ:

Ահա թե ինչ վերջութեան են տվել այդ օրը Բագարնայա փողոցում տեղի ունեցած դեպքերի ականատեսներ Ա. Փարսաղանյանը, Բ. Բոչարյանը և Ս. Իսահակյանը. «Մենք սեռնում էինք, թե ինչպես են ջարդում փողոցի երկու կողմերում եղած խանութները և թալանի տալիս: Ոստիկանութիւնը, ինչպես միշտ, անստորեր հանդիսատեսի դերում էր»<sup>1</sup>:

Արշունարբու գայլերի ոհմակները, ատրճանակներով ու դաշույններով վրնված, վխտում էին փողոցի մի ծայրից մյուսը՝ ավելացնելով անմեղ զոհերի թիվը: Ամբողջ փողոցի վրա թափված էին դիակներ: Ոստիկաններն ու կաղակները կա՛մ թուրքերի հետ մասնակցում էին կողոպուտներին, կա՛մ հավաքում ու տայրերի մեջ էին նետում դիակները: Կապակներից մեկը, սեռնելով կողոպուտած ապրանքներով սայլ քաշող թուրքին, սնստում է նրա բեռը, ապա, վաղաքջանքով ուսին խփելով, ասում է. «Կեցցե՛ս, ապրե՛ս դու, գնա՛»: մի ուրիշ կաղակ թուրքից վերցնում է ատրճանակը և շուտով մուռ սալուց հետո ժպտալով վերադարձնում նրան՝ չմտանարով նաև ցովասանքների շոայրել՝:

Ահա փողոցում կրկին երևաց նահանգապետը՝ ոստիկանապետի ուղեկցութեամբ և կաղակներով շրջապաս-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 234, թ. 10:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 11:

ված: Իջնելով կառքից՝ նա և ոստիկանապետը ձեռքով բարևում էին մոտեցող մարդասպաններին, ապա զրուցում նրանց հետ: Այդ պահին նրանց շուրջը հավաքվեց թուրքերի մի մեծ բազմություն. բոլորն էլ բացելուց կրում էին հրացաններ ու դաշույններ: 10-15 րոպե անց նահանգապետը հեռացավ, նրա հետ միասին՝ բոլոր կազակներն ու վինպուները՝:

Ջարդարարները նորից գործի անցան՝ հարձակվելով մարդկանց, տների, խանութների վրա՝: Կեսօրից հետո նրանց հարձակումներն էլ ավելի սաստկացան: Հազարի հասնող թուրք ամբոխը Չեմրերեքենդից առաջանում է դեպի հայոց եկեղեցին՝ հայկական թաղեր խուժելու համար:

Այդ ժամանակ կենտրոնատեղի դարձած Մելիքյանի «Ռեմերանդտ» լուսանկարչատանն էին գտնվում Դումանը և նրա յոթհոգանոց վինված խումբը, որի առավել նշանավոր դեմքերն էին դաշնակցություն արի մարտիկներ Մարտիրոս Չարուխչյանը, Մկրտիչ Աղամալյանը, Հմայակ Չանփոլաղյանը և Ախալցիսայի Միրն, իսկ բակում խմբված էին լնդնապաշտպանության ընդունակ երիտասարդները՝ պատրաստ հրամանի:

Եվ ահա յոթ անձնուրաց հայորդիների այդ խումբը Դումանի գլխավորությունը առաջինը նետվեց Չեմրերեքենդից խուժող թուրք ամբոխին ընդառաջ՝ վրկելու համար ազգակիցների կյանքն ու պատիվը: Լուսանկարչատանը գտնվող Աբրահամ Գյուլխանդանյանը և Հ. Յ. Դ. Բաքվի կազմակերպություն կենտրոնական դեմք Լևոն Թադևոսյանը (Պա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 136, թ. 13:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 234, թթ. 10-11:



պաշա) փորձում են արգելք լինել այդ պերհանուզն քայլին և Դումանին խնդրում են ընդառաջ չզնալ կատաղած ամբուխին, չվստանալ իր ու խմբի անդամներին կյանքը, բայց սասնում են կտրուկ մերժում: Դումանը պատեր սանդիբը:

Իր փոքրիկ «Սմիտ-Վեսեն» ատրճանակով Դումանի խմբին միացած Վահան Մինաստրյանը հետադարձում այսպես է նկարագրել Նիկոլի կերպարը. նա «նոյն խմորն էր, սրից ստեղծվել էին Մարթթեանները, Լապարեանները, Լորիս Մելիքովները, տարբեր էին միայն ժամանակներն ու պայմանները: Հայ իրականության մեջ նրան վիճակված էր նոյն բախտը՝ ինչ յարիւրավոր խմբապետերի: ... Նա ամեն պուծի մեջ իր նախամտածված ծրագրերն ուներ, ու պուծալուծեան էր դնում բոլոր այլ միջոցները սպառելուց յետո: Եթէ մի բան կարող էր այլ կերպ լինել, քան կարծում էր ինքը՝ փորձում էր: Այստեղից՝ նրա անսխալագուհ, բնական դեմոկրատիզմը, սուր ու լարված ուշադրությունը դեպի շրջապատը, մարդիկ, կարծիքները: Միտածամանակ նա չէր սրտականում այնպիսիներին շարքին, որոնք ձգտում էին դեմոկրատիզմի միջոցով պատասխանատվությունը բաժանել: Ո՛չ: Վճռական պահին ինքն էր ճշտում ամեն բան և միայն ինքն էր պատասխանատուն: Բայց նրա վճռականությունն անվարան չէր: Մի ամբողջ օր նա տատանումների մեջ էր՝ առաջին գնդակն արձակելու հրահանգ տալուց առաջ: Ընդհարումներից խուսափելու բոլոր յոյսերը չէին մարել դէռ: Բայց երբ անխուսափելի դարձավ այդ, նա հետապնդեց սուրված հրահանգի ամենադաժան գործադրությունը»<sup>1</sup>:

---

<sup>1</sup> «Հայրենիք», № 7 /270, Հուլիս, 1948, էջ 22:

Եվ Գուամանը նույն կերպ վարվեց այս անգամ ևս, այս վճռական լուսկին, երբ Թուրք ամբողջ Հոխուրտարով առաջ էր գալիս: Վ. Մինախորյանն ընթերցողներին է հանձնել սուհի սրտակերք.

«Հանկարծ լուսանկարչատնից դուրս եկավ ջղուտ, ոսկրոտ, բարձրահասակ նիկոլը:

-Ո՞վ կա այստեղ ... Մուկուչ\*, Մարտիրոս\*\*, Համո\*\*\*, Մկո\*\*\*\*, դուրս ելէ՛ք և ուր որ թուրք, թախտար տեսնե՛ք, խփե՛ցէ՛ք, անխնա կոտորեցէ՛ք»<sup>1</sup>:

Կատարելով հրամանը՝ խումբը հավաքվեց: Խմբին միացան նաև ասորճանակներ տնեցող երիտասարդներ: Մարտիկները Մկրտիչ Աղամալյանի գլխավորությամբ հազիվ էին մուրս եկել փողոց, երբ վիճալի Թուրքական բարձրավոր շուկայից մի մեծ խումբ Թուրքեր կրակ բացեցին նրանց սպրբությունը, սպա հարայհրոցով վազելով՝ բռնեցին Վրոնցովսկայա փողոցի վերնամասը: Սկսվեց կռիվը, որի ընթացքում Թուրքերը հասան հայաշատ շրջանի կենսալոն և բռնեցին Արմյանակայա գուբահեռ փողոցի անկյունը, եկեղեցու մոտ: Անհնարին եղավ այդտեղ երկար վիճադրելը, քանի որ հակառակուրդը վինված էր հրացաններով և հեռվից էր կարողանում կրակել ասորճանակներով վինված հայերի զիրքերի վրա: Պարզ էր, որ հայ մարտիկների համար կոփվր կարող էր արդյունավետ լինել միայն մոտ սարածություն

---

\* Մկրտիչ Աղամալյան:

\*\* Մարտիրոս Պարուխչյան:

\*\*\* Հմայակ Ջամխորադյան:

\*\*\*\* Ախալցխացի Մկո:

<sup>1</sup> «Հայրենիք», N<sup>o</sup> 7 (270), հուլիս, 1948, էջ 18:

ղեկաբում: Նրանք ստիպված եղան նահանջելու դեպի Տատարակայա փողոցի վերջնամասը, իսկ թուրքերը գրավեցին նրանց դիրքերը: Ակավեց մի կատաղի կռիվ եկեղեցու թիկունքի կարճ փողոցի անկյունից անկյուն: Հայ մարտիկների դիրքերի սրաչուսման թշուրհուր ղնալով թուլանում էր:

Ճիշտ այդ պահին էր, որ հանկարծ սողաների մաս հայտնվեց Նիկոլ Դումանը: Կրկին խոսքը տանք այդ կռվի մասնակից Վահան Մինախորյանին. «... Յանդարտ, բանիմաց, չըջայայաց Նիկոլը վայրկեանի մէջ պարզել էր իր անսխալը: Մուկուչին, Համոյին ձեռքով ցույց տալով Տատարակայա փողոցի մուսքը, նա հրամայեց.

- Երբ ձայն ստամ, բանեցէք այդ փողոցի անկյունը, մնացածներդ յետ քաշվեցէք»<sup>1</sup>:

Նույն փայլակնին Նիկոլը, ստորճանապարհ ձեռքին, սրկվեց սեղոյն և, վազելով առաջ, իր բարձր հասակով մեկ կանգնեց փողոցի մեջսեղում՝ հենց թուրքերի դեմ դիմաց, և սկսեց կրակ տեղալ նրանց վրա:

Չդիմանալով անապասելի հանդուգն արարքին՝ թուրքերը խուճապահար լուրս ցատկեցին լվրքելոյն և վախանա: «Նիկոլը հետապնդում էր, մենք ձագերի պես նրա հետևից վազում էինք»<sup>2</sup>, - վերհիշել է Վ. Մինախորյանը: Նրան հետևեցին մարտիկները և սկսեցին հայածել թշնամուն, ուր, մի քանի դիակ թողնելով, չքաղավ աչքից:

Հայ մարտիկների մեկ-երկու ժամ տևած խիզախ գործուղութունների շնորհիվ կեսօրին մաս թուրք խուճանը սանձ-

---

<sup>1</sup> «Հայրենիք», № 7 (270), հուլիս, 1918, էջ 20:

<sup>2</sup> Նույն տեղում:

վեց: Քաղաքի կենտրոնը գրավված էր, և հայկական տարբեր թաղամասերի միջև կապը՝ վերականգնված:

Մի բուռ քաջերի անվիհեր դիմադրությունը, սպա և շեշտակի պուհը չչմեցրել էին իրենց անպթուլթյունների համար մինչ այդ բոլորովին անպատիժ մնացած ջարդարարներին: Մյուս կողմից՝ անմիջապես բարձրացավ հայերի դիմադրական ոգին: Նրանց հույս էր ներշնչել իրենց պաշտպանության դուրս եկած վրիժառուն: Նրանք արդեն մտածում էին, որ եթե իրենք կազմակերպվեն, ապա ամենուրեք կարող են փակել մարդասպանների ճանապարհը: Այդ հոգեփոխությունը սկիզբն էր այն ուժվին հակաարածության, որ հայերը ստար էին հետագա օրերին:

Տեղեկանալով Դուժանի փոքրաթիվ խմբի գործադրության մասին՝ քաղաքի սարբեր սեղելում առաջացան լինքնապաշտպանական ջոկատներ, որոնց ղեկավարությունը ստանձնեց Հ. Յ. դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեն: Ջոկատների մեջ մտան նաև այդ օրերին Բաքվում գտնվող արևմտահայ հայտնի հայդուկներ Մոկացի Գրիգորը և Առյուծ Ավագը, որոնք քաջարար կովեցին Բաքվի առաջին ընդհարումների օրերին, որից հետո սմեցան դավաճներ:

Անդրադատնալով Բաքվի ընդհարումների օրերին Նիկոլ Դուժանի կրտսերած գործի նշանակությունը՝ Ա. Գյուլիսանդանյանը գրել է. «Կարելի է առանց վարանումի ասել, որ եթե փետրվարի օրերին Դուժանը չերևար Բաքուի մէջ, Բաքու լինքնապաշտպանութեան գործը կամ չէր յաջողվի, կամ կստանար պատահական բնոյթ, և, յավանօրեն, Բաքուի հայութիւնը սոսկալլորեն կսուժեր՝ առանց կարողանալու հակառակորդին տալ արժանի պատասխանը:

Շնորհիւ Դուժանի սուր դիմադրութեան եւ վճատման

կեցւածքի, մեր մարտիկները, որոնք մինչ այդ անվճարական դիմադրութեան մէջ էին, և ո՛վ գիտէ, թէ ինչպէս պիտի փրկէին իրենց կյանքը թաթար խուժանից, Դումանի մի հրամանը ստանալուն պէս Գուրա եկան սաստանողական հօգեկան վիճակից եւ բոլորուին կերպարանափոխուած՝ հերոսներ լի պէս պիմապիւն սկսեցին լրենցից սասնապատիկ ավելի ուժերին»<sup>1</sup>:

Բայց, ի սարբերութեան հանրագն հայ քաջերի, հայ բուրժուաքաղքենիական դասը շարունակում էր մնալ հոգեկան խաթար վիճակում՝ հույսը կապելով սաստճ ողորմածութեանը:

Արդէն փետրվարի 7-ի կեսօրին 300-ի չափ երխտասարդներ կոփի պատրաստ ներկայացել էին Նիկոլին: Նրանց մի մասը վինված էր սաւրբել սեսակի, հլմնականում սրտուրական հրացաններով, իսկ մնացածները եկել էին աւանց հրաղենի՝ դինված միայն դաշույններով: Նրանք հույս ունեին վենք ստանալ Իաչնակցութեան կենսալոնից, բայց այնտեղ էլ դենք չգտնվեց: Բանից պարզվեց, որ Բաքվի հայութիւնը, փաստորեն, անգէն էր:

Հայերն անհոգարար աննպատակահարմար էին համարել զենք ձեռք բերելու համար դրամ ծախսել:

Տեսնելով այդ սաղնասարգի վիճակը՝ հայերից ամանք իրենց մոտ եղած հրացաններն ու ստորճանակները հրատարակ բերեցին և հանձնեցին կովի պասուրասսու երխտասարդներին: Դրան զումարվեց Բաքվի դինվորական կայադորում ծառայող հայ վինվորներ ի կողմից մեծ Իժվարութեամբ պե-

---

<sup>1</sup> Ա. Պրոխորովիչ, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. II, էջ 62:

տական պահեստներից հանված և նիկոյ Դոմանի տնօրինութանը հանձնած սահմանավակ թվով զենքն ու զինամթերքը: Մեկիքյանի լուսանկարչատան սենյակներից մեկը վերածվեց դաշնակցության դինանոցի: Բայց պահանջի համեմատ՝ բերածը չնչին էր, ուստի հայ մարտիկները հրահանգ ստացան երբեք նախահարձակ չլինել, խնայել ու կրկին խնայել վամպուշտները:

Ժամը 4-ի մոտերքը հայոց եկեղեցու դիմացի Պարապետի հրապարակ եկավ մի դինավորական վաշտ: Հայերը կարծեցին, թե լիխանութունները վերջապես զենքի են զլմում և ուղում են պաշտպանություն տակ առնել իրենց: Բայց շուտով պարզվեց, որ վաշտը մտադիր չէ օպնություն ձեռք մեկնելու: Ավելին, ինչպես հետո պարզվեց, նրա խնդիրն էր կաշկամդել հայ պաշտպանների գործողությունները:

Այդ տեսներով՝ թուրքերը, սրանք հայ զինվորներից ջարդ կրելուց հետո վախենում էին որևէ գալ իրենց թալամասերից, այժմ սիրտ առան և համարձակ դարձան: Ջորջի ներկայությունը նրանք սկսեցին ջարդել Ցիցխանովսկայա, Կոլյուրիակինսկայա և Բաղարնայա փողոցների վրա գտնվող հայերին պատկանող մանուֆակտուրային և պարենի խանութները ու թալանի տվեցին դրանք: Մի քանի տասնյակ քայլ հեռու գտնվող ուս զինվորները անստարբեր դիմում էին այդ ամենը: Ավելին, շուտով թալանող թուրքերին միացան ողա կանայք և քաղաքապահ ոստիկաններ<sup>1</sup>: Որոշ տեղերում հարբելով պահեստներից և խանութներից թալանած խմիչքներով՝ զինվորները և ոստիկաններն իրենք էլ էին

---

<sup>1</sup> Տե՛ս Ա. Գյուլխանդանեան հայ-թալանական ընդհարումները, հատ. Ա, էջ 28:

մասնակցում կողոպուտին<sup>1</sup>: Քաղաքապահ ոստիկանները կողոպտում էին հայերի պիակները, հագնում սպանվածների հոգրակոշիկները:

Թաթմար երկար էր շարունակելու, եթե չհայտնափին մի խումբ հայ մարտիկներ, որոնք հրացաններից ու ատրճանակներից կողոպտվածները վրա կրակ բացեցին. թուրքերից մի քանիսն ընկան, մյուսները փախուստի դիմեցին:

Ոստիկանությունն ու գործերը, որ մինչ այդ անսարքեր պիտու էին թալանը, այժմ, երբ սեռան հայ պաշտպանների աճող պիմալուծյունը, սկսեցին հրացանազարկի բռնել նրանց: Հայր մինչ այդ մոտացել էր, որ հայերի և թուրքերի միջև ընդհարումների ժամանակ առաջ գործը հիմնականում բռնել է վերջիններիս կողմը: Լրիվ պարզվեց այն «սրտաուռ» համերաշխությունը, որ կար առաջ գործի, ոստիկանություն և թուրք խուժանի միջև: Այս կացությունը չափազանց վհատեցուցիչ պիտի լիներ, եթե վճռակամությունն ու համարձակությունը պակասեին հայորդիներին:

Հայ պինյաները պիմեցին Բաքվի հայերի «պաշտոնական ներկայացուցիչ», ճամախու թեմի առաջնորդ Անանիա եպիսկոպոսին, որպեսզի նա հետախուսով կապվի նահանգապետ նակաչիձեի հետ և պահանջի, որ իշխանությունները քաղաքը պաշտպանեն ոճրագործներից, իսկ եթե այդ բանն անել չեն կարող, ապա գործն ու ոստիկանությունը դուրս բերեն Բաքվից, որպեսզի հայերն իրենք կազմակերպեն իրենց պաշտպանությունը:

Կամազուրկ և վախկոտ եպիսկոպոսը հրաժարվեց նույն

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 120, թ. 2:

նիսով մոտենալ հեռախոսին, բայց ղեկքի ճնշման տակ, սյ-  
նուամենայնիվ, հեռախոսեց: Նահանգապետը հավաստիաց-  
րեց, որ ոստիկանապետ Դիմինսկին իր ջոկատներով չըջում  
է քաղաքում, և շուտով վերջ կսուրվեն անկարգություններին:  
Ուսաց նաև, որ ոստիկանապետը անպայման այցի կգա  
սրբապանին, և ուր ինքը՝ ոստիկանապետը, պատուաստ է կա-  
սարելու եպիսկոպոսի «բոլոր կարգադրությունները»:  
Հայտնեց նաև, որ հեռագրել է Թիֆլիս, որպեսզի այնտեղից  
օդնավում զորք հասցնեն Բուքու:

Նակրաչիձեն ստորաբար խտրում էր: Քստրաբում բախա-  
րար թվով զուրք կար, ուր կարող էր անմիջապես ջարդելի  
առաջն աունել, բայց, ինչ խոսք, դա նրա ծրագրերի մեջ չէր  
մտնում:

Շուտով, իսկապես որ, ոստիկանապետը եկավ, կեյծ  
հարգանքով մոտեցավ սրբապանին, համբուրեց նրա աջը և  
այնպիսի սեռք ընտրեց, թե պատուաստ է ծառայելու նրան:  
Սրբազանը փորձեց ակնարկել, թե թուրքերը զինված են,  
բայց ոստիկանապետը շատ քաղաքավարի ընդհատեց նրան  
և սկսեց պատմել, թե ինքը ահա մի քանի ժամ է, ինչ չըջում  
է քաղաքում, ելել է բոլոր թաղամասերում, բայց ոչ մի սեղ  
չի հանդիպել գոնե մեկ զինված թուրքի, ընդհակառակը՝  
միայն հայերն են զինված, ուստի ինքը կարգադրել է նրանց  
զինաթափ անել:

Երկուշաբթի ամբողջ օրը՝ փետրվարի 7-ին, կախվել շա-  
րունակվեց անդադար: Հատկապես ուժեղ մարտ տեղի ունե-  
ցավ Վելիկոկնյաժսկայա փողոցում: Այդտեղ էր գտնվում  
Պետրոսյանի զինվածառատունը, որ թուրքերը ձգտում էին  
զրավել, բայց դա նրանց չհաջողվեց: Երեկոյան կողմ փողո-  
ցը, ամբողջ երկայնքով մինչև ծովափ, անցավ հայերի հսկո-



դուժյան տակ: Գիշերվա ընթացքում վաճառատան ոչ մեծ թվով զենքերը և ռազմամթերքը փոխադրվեցին և զրվեցին ինքնապաշտպանությունների մարմնի տրամադրությունների տակ:

Այդ նույն օրվա երեկոյան Մալականակի այգու դիմաց գտնվող Գյանջեցյանի տանը կաղնակերպվեց զենք պատրաստելու և նորոգելու արհեստանոց, որի աշխատանքը ղեկավարում էր Գասպար Տեր-Մկրտչյանը: Մտոայած լինելով բանակում և հմուտ լինելով դինագործությունների մեջ՝ Գասպարն այդ օրերին անգնահատելի դեր խաղաց ինքնապաշտպանությունների գործում:

Առաջնային էր մնում Թուրքական Շամախիյնկա թաղում գտնվող Սիմոն Սիմոնյանի բնակարանում պահեստավորված զենքի սեղավաճառման խնդիրը, որի լուծմանն առաջինը ձեռնարկեց հենց ինքը՝ իսթանբուլյան զենքի պահեստապետը: Գիշերը վրա հասնելուն պես Ս. Սիմոնյանը, իր հետ վերցնելով Ախալցխացի Մկոյին, Պղտիկ Յապոնին և ռուսական բանակի մի հայ զինվորի, որը, զենքերի առաջին լսկ ժամերին գուրանուցից վախճելով, լրեն սուրամաղի էր «ազգին», սուզվեց գիշերային մթության մեջ: Մեկրչյանի լուսանկարչատանը գտնվող ինքնապաշտպանությունների ղեկավարները մեծ անհամբերությամբ սպասում էին Սիմոնյանի և նրա խմբի վերադարձին: Չէ՞ որ ձեռնարկն արտակարգ վտանգավոր էր. մինչ սեղ հասնելն անհրաժեշտ էր կենսությունից աննկատ անցնել ահազին սուրածություն, թափանցել գուռ թուրքերով բնակեցված թաղերը՝ ամեն վայրկյան պատրաստ ենթարկվելու բախտորոշ անակնկալների: Բարեբախտաբար ամեն ինչ բարեհաջող անցավ, և խումբը կեսգիշերին տեղ հասցրեց պահեստից հանած 9 հրացան, նույնքան տասնոցներ, բավական փամփուշտ:

Գիշերը Նիկոլայանակոյցս փայտայի մյուս ծայրում, սրկոյ այն կողմ թուրքական թաղերն էին, լսվում էին հայերի օգնութեան աղաղակներ: Նրանք հետ էին մղել թուրքերի մի խոչոր խմբի հարձակումը, բայց երկրորդ հարձակման առաջն առնելու համար այլևս ղինամթերք չունեին: Թուրք ղինված ամբոխի դիրքերով անցնելով՝ լուսանկարչաստուն էլ հասել ճագիլանյան աղզանունով մի սրխորդ՝ այդ վտանգված չրջանի համար խնդրելու ղենք, փամփուշտ և կոփողներ: Նա տեղ էր հասել հենց այն պահին, երբ Ս. Սիմոնյանի խումբը նոր էր ժամանել: Իր հետ առնելով ինչ կարող էր՝ անվահեր աղջիկը շտապ վերադառնում է դիրքերը՝ յուրայիններն մտա:

Կազմակերպված դիմադրական ուժի ստեղծումից բացի՝ ձ. Յ. Դ. Բաքվի կոմիտեն ձեռնարկեց արյունայի ընդհարումները դադարեցնելու նաև ուրիշ միջոցներ: Մասնավորապես որոշվեց բոլոր հանքերում ու գործարաններում շտապ հրավիրել թուրքիկ ժողովներ և բազմազգ կողեկավորներին հանգստութեան կոչել, ինչպես նաև մերկացնել լիւթանութեաններն ստոր դերը քաղաքում ծայր առած ազգամիջյան կոփում: Դաշնակցականների այդ նախաձեռնութեանն անմիջապես արձագանքեցին մյուս հեղափոխական կուսակցութեանների տեղական կազմակերպութեանները՝ ՌՄԴԲԿ Բաքվի կոմիտեն, Լսւոների և հնչակյանների ղեկավար մարմինները:

Երրորդ օր, փետրվարի 8 (21), երեքշաբթի:

Ընդհարումների երկրորդ, լոյս երրորդ օրվա գիշերը հայերից ոչ ոք չքենց. բոլորն նյարդերը ծայրաստիճան լարված էին:

Լուսաբացին թե՛ թուրքերը և թե՛ հայերը ոտքի վրա էին՝ սրատրաստ կռիլ:

Եթե ընդհարումների առաջին երկու օրերին իշխանութունները թուրքերին զինում էին գաղանի, ապա փետրվարի 8-ից արդեն զործում էին բացեցրաց: Ոստիկանությունն ու նրա գործակալները մուսուլմաններին զենք ու փամփուռա էին բռնանում ուղղակի փողոցներում:

Զինված մուսուլմանների թիվը գնալով արագորեն ավելանում էր: Հայերը միմյանց հարց էին տալիս. «Որտեղի՞ց է նրանց այդքան զենք»:

Այսու կողմից՝ ոստիկանները, որոնք վաղ ստալտայից շրջում էին փողոցներում, իսկ երեկոյան նրանց միանում էին կապակները, հանդիպելով հայերի և ուսանելի, նրանց խուսափում էին և եթե որևէ մեկի մաս գտնում էին զենք, անմիջապես խլում էին: Ոստիկանությունը, կաղակները և դինվորները խուսափում էին սկսեցին նաև հայերի սննդում:

Ի պատասխան ոստիկանության և զորքի հակահայ գործողությունների՝ Չ. Յ. դաշնակցությունից Բաքվի կոմիտեն իր վինյալներին լիցենզիա կարգապահություն՝ վինաթափության ամենափոքր իսկ փորձի դեպքում դիմադրել: Ձենքը իշխանություններին հանձնելը համարվեց ծանր հանցագործություն, որի հետևանքը իստա պատիժը պիտի լիներ: Կարգապահությունը բարերար ազդեցություն ունեցավ: «Մեր մարտիկները, - գրել է Ա. Գյուլխանդանեանը, - որ մինչ այդ չգլխախնայեցին, թէ ինչպես վարվեն խուսափության պարագային, այժմ ազատ էին զգում եւ, իրոք, վիճաբանություն էին ցույց ստալտա թէ՛ ոստիկաններին եւ թէ՛ զորքին, երբ այդպիսի անակնկալի էին յանդիպում: Բայց դրա հետ միասին մեր մարտիկներին հրահանգվեցաւ, որ նրանք ամէն կէրպ խուսափեն միջադեպերից եւ բախումներից ուստ զինուորների

կամ ոստիկանների հետ: Բարերախտարար մեր ընկերների մի քանի անգամ ցույց սուռած վիմադուրթունից հետո զուբը կամ ոստիկանները այնքան էլ հեշտութեամբ չէին համարձակվում խուզարկել մերոնց»<sup>1</sup>:

Միաժամանակ հայտնի դարձավ, որ նաՀանդատեալը ոստիկանությանը խիստ հրաման է լիջեցրել՝ կոնկրետ իրավությունից ելնելով, հարկ եղած դեպքում կրակ բացել հայ բնակիչներին դեմ, եթե նրանք փորձեն նախահարձակ լինել թուրքական թաղերի վրա: Եվ դա այն դեպքում, երբ ոստիկանությունը ոչ միայն թուրքերին չէր արգելում սպանել ու թալանել, այլև նույնիսկ չէր փորձում գտնել մարտակներով ցրել հակահայկական հրոսակախմբերը, չէր ձերբակալում մարդասպաններին, չէր խլում կողոպտված ունեցվածքը: Ավելին, կապակների կողմից մուսուլմաններից իրված բերդանկանները վերադարձվեցին: Կազակները և ոստիկանները հանգիստ քայլում էին կամ ձիերով շրջում արյունոտված փողոցներով՝ պազանացած կողոպտիչներին ու մարդասպաններին խմբերի մեջ՝ լկտիաբար հրաժարվելով օգնել իրենցից վրկություն աղերսող գոհերին, արգելում էին հանգցնել հրդեհները և փրկել կրակների մեջ մեռնողներին<sup>2</sup>: Ավելին, հաճախ իրենք էին խրախուսում սպանությունները: Երբ ուսս քաղաքացիները վնասվում էին, սպանվում և քաղաքապահ ոստիկաններին հանվումանում էին, թե ինչու չեն միջամտում դեպքերին, սրանք անկեղծորեն պատասխանում

---

<sup>1</sup> Ա. Պյոլիտոմոնտոն, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. II, էջ 40:

<sup>2</sup> Տե՛ս *Революция и Р. К. П. (6) в материалах и документах. (Хрестоматия), том третий, 1905 год, М.-Л., 1926, էջ 432:*

էին, որ իրենց միջամտելու հրաման չի տրված:

Դեռ այն ժամանակ բոլորի համար պարզ էր, որ մեկերկու վաչաւ բավական կլինէր, ուր հենց ամենասկզբից կանխվեր ջարդը: Ձենքը գործի դնելու ղինվորների ամենաչնչին փորձի դեպքում իսկ վայրագությունն անող մուսուլմանները փախուստի էին դիմում: Մի տեղ հաջողվեց համոզել ղինվորներին ցրել ամրոխը: Թուրքերը, սպանելով մի քանի հայերի, ծանակում էին ղիակները: Ոչ հետո կանգնած մոտ 20 ղինվորներ մոայրորեն ու անտարբեր նայում էին այդ սարսափազդու տեսարանին: Բարվեցի ոռոսներից մեկը մտտ է վազում նրանց և վրդովված հանդիմանում.

- Ի՞նչ էր նայում, ինչպե՞ս չէր ամաչում, որ օրը ցերեկով թույլ եք տալիս մարդկանց սպանել:

- Մենք ի՞նչ կարող ենք անել: Մեզ հրամայված չէ միջամտել, - շփոթված ասացին ղինվորները:

- Ամաչե՛ք, եղբայրնե՛ր: Եթե ձեր պետերը գողանանք են, Կանե Կուր մարդ եղեր: Դե Կանե օր կրակեր: Շո՛ւտ:

Ձինվորները շփոթված իրար նայեցին:

- Կպատժեն ավար, - երկյուղած ասացին նրանք:

- Ոչինչ չի լինի, եղբայրնե՛ր: Երաշխաստարում եմ դուս համար:

Ձինվորները երկու համազարկ տվեցին օր: Բոլորը վայրկենապես չքացան: Բայց հետո ղինվորները վախվորած ասացին, որ հիմա լրենց, գանկելով Կաստարկ պարկուճները, դատի կտան՝:

Ձինվորները կոպտորեն հրաժարվում էին ուղեկցել հա-

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 120, թ. 4:

յերին, իսկ երբեմն՝ նաև աւաններին, որոնք ցանկանում էին դուրս գալ չրջապատված տներից ու թաղամասերից: Նրանք հայտարարում էին, որ իրենց արվելված է հայերին ուղեկցել:

Սասախաթի՝ Բիրի-Հեյրաթում Կոնստանդնուպոլսի մի բանվոր պատմում էր, թե ինչպես կազակները, իբր ուղեկցելով հայերին, նրանց բերել են մարտասպան հրոսակախմբերի մոտ և լքել. վերջիններս անմիջապես հուշասել էին դժբախտներին<sup>1</sup>:

Ա. Գյուլիսանյանը պրոս է, որ թուրքերի հանդեպ թշուրհ հասել էր այնպես, որ ոստիկանների և շատ անգամ զորքի ու կազակների ներկայութեամբ նրանք անվտուր քարյուղ էին լցնում հայերի սննդի՝ վտարցի կողմի Կոնստանդնուպոլսի պատուհանների վրա, կրակի սալիս և հանգիստ լիսում, թե ինչպես են սկսում այլով սննդը: Եթե սննդի մեջ սրտառապարվածները քաջութուն էին ունենում վիճակներով վրկվել կրակից, թուրքերը հրացանի համազարկերով նրանց սալպում էին հետանալ պատուհաններից: Նրանք կրակում էին այնքան ժամանակ, մինչև որ ներսից վիճակները դադարում էր, և տունը այրվում էր ամբողջապես: Տների մեջ այրվողների խելահեղ կանչերը, մեռնողների վերջին հեծկասանքը բնավ չէին ավրում կազակների և մանավանդ չրջապատող թուրք խուժանի վրա, որոնք վարձութեամբ և վզվելի ու անամութ սրախտութուններով էին արձագանքում մեռնողների կանչերին<sup>2</sup>:

Բարվում ամենքը սալոր էին կարծելու, թե հարստու-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 128, թ. 9:

<sup>2</sup> Ա. Գյուլիսանյանի, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. II, էջ 41:

Թշուներ ամենապուր է, ամենակարուղ, պրանով կարելի է ապրել ոչ միայն հանգիստ, այլև ապահով: Բայց արհամիրքը չէր խնայում նաև հարուստներին:

Երեքշաբթի կեսօրին թուրքերը հրդեհեցին հայ մեծահարուստ Ասլանովի մեծ ու չքեղ ապարանքը: Բնակիչներին նախօրոք հաջողվել էր լուրս պրծնել սնկոց, ուր խուժանի կողմից թալանի ենթարկվելուց հետո մասնավեց կրակի: Տեսարանը սահմոկեցուցիչ էր. անհաշիվ թուրքեր դառնում էին դեռ ու դեն, ցատկոտում հրդեհի շուրջը, մուշտակների մեջ պարուրված՝ քաշքշում կապուցներ, զանազան լրեր: Աղմուկը խառնվել էր հրդեհի ճարձատումներին:

Նույն օրը հրդեհվեց Յերկովնայա փողոցի № 93 տունը, որը մեծահարուստ Բարաջանովին էր պատկանում: Տունը նախապես շրջապատվեց, սկսվեց կասաղլի գնդակածուխլույն: Տան մեջ պաշարվածները երրորդ հարկի պատուհաններից նույնպես կրակում էին, բայց նրանց գնդակները վնաս չէին պատճառում թուրքերին, քանի որ չէին կարողանում գլուխները բարձրացնել և նշան բռնել: Ի վերջո թուրքերը կրակի մատնեցին տունը՝ բնակիչներով հանդերձ:

Ահա թե ինչ է սրտամում այդ տան հրդեհի մասին ակադեմիկոսը. «Երեկոյան ժամը 9-ին, երբ ամեն ինչ այրված էր բացի ներքնահարկից, թուրքերը ներս են մտնում և արկղերի մեջ գտնում 9 թաքնված հայ: Ես չեմ կարող նկարագրել այն սարսափը, որ երևում էր այդ դժբախտների դեմքին: Նրանց մեկ-մեկ լուրս էին բերում և ամենքի աչքի առաջ կոտորում... Երբ գնդակով ծակեցին նրանցից մեկի պուխը, արյան

---

<sup>1</sup> «Մշակ», № 25, 17 փետրվարի 1905 թ.:

զորեղ չիլթը ողողեց գետինը: Երեսաց մուլթ մարդկային պատկեր, որը, բարձրացնելով վերարկուի փեշերը և նրանով ծածկելով գլուխը, գալիս էր այրվող տան բակից: Պառավ մայրը տեսնելով նրան՝ ճչաց ու ընկավ: Նա ճանաչեց, որ մոտեցողը որդին է: Այս դժբախտը չէր կարողացել մնալ այրվող ստան գաղտնի անկյունում և ուղջ-ուղջ չայրվելու համար վճուել էր Կուրս գալ՝ հույս դնելով պաշարույնների գլխասրտուծյան վրա... Բայց ամբողջ, ուրախանալով, որ մի նոր Կոհ է գտել, վրա պրծավ և մի ակնթարթում կսուր-կսուր արեց նրան: Դժբախտ մայրը, որի վրա ոչ ոք ու չաղբուծյուն չէր դարձնում, ընկավ ծխացող գերանների մոտ և ուշաթափվեց: Կրակը դանդաղ մոտեցավ նրան, և հագուստը սկսեց այրվել: Ու չքի չգալով՝ նա այրվեց գաղաղած ամբողջի աչքի առաջ»<sup>1</sup>:

Միայն ուշ երեկոյան մարտիկները լուր տասցան, որ այրվում է Բարաջանովի տունը: Եվ երբ տեղ հասան, արդեն ամեն ինչ վերջացած էր: Նրանք ականատես եղան, թե ինչպես թուրք ամբողջը շրջապատել էր մխացող սուռնը և հրճվում էր իր «սխրագործուծյան» վրա:

Հրդեհի բացերում էին նաև հարևան սենյոր՝ շրջապատված գազազած խուժանով, որը պատրաստ սպասում էր հոշտակու կրակներից Կուրս պրծնող դժբախտներին: Բազմաթիվ ընտանիքներ, հավաքված մի ստան կսուրլի վրա, լուպե առ բոպե սպասում էին սոսկալի վախճանի:

Հայ մարտիկները արագորեն դիմեցին գետլի վառվող սենյոր և մոսինի հարվածներով սապալեցին մի քանի թուր-

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 383, թ. 34:



քի: Տեսնելով այդ՝ ամբողջ սարսափահար փախուստի դիմնց: Լեպա մարտիկները նետվեցին վառվող տների մեջ և, փրկելով շուրջ 100 մարդու, նրանց առաջնորդեցին հայոց եկեղեցու կողմերը<sup>1</sup>:

Ավելի ստույգ էր մեծահարուստ Ալեքսանդր Արամովի սան հրդեհը, ուր բոցերից կրակի էին մասնավել նաև հարևան քարաշեն տները<sup>2</sup>:

Երբ կատաղի թուրք խուժանը շրջապատեց Արամովի սունը, սա իր երկու պաստանի ուրվիների հետ հրացաններով պիմապուլթյուն էր ցույց ստալա, կրակում պասուհաններից ու փողոցին նայող սրահամբույ: Այդ նույն սրահին Արամովի կինը հեռախոսով օգնություն էր խնդրում լիխանությունների ներկայացուցիչներից, ազգականներից ու ծանոթներից, սակայն բոլոր աղիտուրում կանչելը անօգուտ էին, ոչ ոք օգնություն ձեռք չմեկնեց: Տունը այրվեց՝ Աղամովի ամբողջ ընտանիքով, ծառաներով, այնտեղ ապաստանած հայ հարևաններով հանվելով<sup>3</sup>: Լեպամովների ամբողջ ընտանիքից ազատվել էր միայն մի պատանի՝ Լեռամայիսը, որն այդ օրը սրտահարար դռնովում էր ազգականի տանը:

Կեսօրի կողմ մահացու վտանգ կախվեց Մալախանովայա վտուրցի վերջնամասում գտնվող այն սան վրա, որտեղ ապրում էր Բեկդադյանների հայտնի ընտանիքը: Թուրքերի մի հսկա գլինված բազմություն արվեն մտանում էր սանը: Ներսում բաղմանդամ ընտանիքի անդամներից այդ պահին

<sup>1</sup> «Իրօչակ», № 4 (157), սուրի, 1905, էջ 60:

<sup>2</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 237, վավ. 57, թ. 4:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 175, թ. 5:

Հովսեփի Բեկդադյանն էր, նրա քույրերը՝ Մարիամը և Ելենան: Ուր որ է՝ պատահելու էր այն, ինչ արդեն կատարվել էր հայկական այլ տների հետ: Բարերախտարար բանը չհասավ ուղբերգության. մտաերջում գտնվող հայ երիտասարդների մի խումբ, տեսնելով առաջացող թուրքերին, ընդառաջ գնաց և, հրացանազարկեր սալով, վախուստով մասննեց նրանց:

Հայերի սները հրդեհվում էին, բայց չէին երևում ո՛չ հրչեջներ և ո՛չ էլ գլինվորներ ու կապակներ, և եթե երևում էին, ապա՝ «ուշացած»:

Եզրակացությունը մեկն էր՝ բողոքների գուր եմ, հայ բնակչությունն իր վրկություն հույսը պետք է դնի միայն ու միայն իր վրա:

Փետրվարի 8-ի ստախտից հայ մարտիկները քաղաքի գանազան մասերում նախաձեռնությունը վերցրին իրենց ձեռքը: Եթե ընդհարումների առաջին երկու օրերին հայերի ղեկավարական ուժն արդեն իրենց ցույց էր սովել, ապա երկու օրվա սկզբից թերադուրը հայերն էին, նրանք էին նախահարձակը: Հայկական կենտրոններ թափանցելու թուրքերի բոլոր վտրմերը ձախսովեցին:

Կեսօրից հետո թուրքերի ղեկավարությունը քաղաքի մեծ մասում կոստովել էր, հայ մարտիկները շարունակում էին անընդհատ ընդդայնել իրենց գործողությունների շրջանակը: Դաչնակցականների ջոկատը, բաղկացած ատրճանակներով և մի տասնյակ բերդանկաներով գլինված 40 երիտասարդներից, ջարդարարներից արագորեն մաքրեց քաղաքի ամբողջ ստորին մասը և մի քանի հարյուր մարտուց բաղկացած գլինված մուսուլմանների ամբոխը Մալականսկի այգուց քչեց մինչև գրեթե քաղաքի ծայրը, այսինքն՝ ուղք քաղաքի միջով:

Հարյուրավոր հայեր իրենց փրկությամբ պարտական էին այդ ջոկատի անձնուրաց կոփին: Նիկոլանսկայա փողոցում սպանություններ և թալան կատարող խմբերին հայ մարտիկների մի այլ ջոկատ քչեց մինչև Ղուրայի հրապարակ, որից այն կողմ թուրքական հոծ շրջաններն էին:

Թուրքերի պարագլուխները, որոնք նախորդ երկու օրերին հայերի՝ խաղաղության բոլոր առաջարկները մերժում էին, սեռնելով, որ ստանուլ են սալլա, երեկոյան շտապ գնացին նահանգապետի մոտ և նրան խնդրեցին հանդիպում կազմակերպել հայերի ղեկավարների հետ՝ «բարլըչլու» (Հաչոտություն) կոչուցնելու համար:

Թուրքերի անհաջողություններն ու նրանց լիակատար պարսություն հեռանկարը խլառ անհանգստացրին իշխանություններին, ուստի պլանները վերկելու շտապ միջոցների դիմեցին:

Նահանգապետ Նակրաչիձեն իջավ Անանիա եպիսկոպոսի մոտ և նրան առաջարկեց հաշտության հուրբլուներով պիմել հայերին: Նա ասում էր՝ թուրքերը երգվել են դադի մոտ, որ կղաղարեցնեն կոիվը, եթե հայերը ևս նույնն անեն: Նահանգապետը միաժամանակ պիմում է ուրիշ նշանավոր հայերի՝ նրանց հրավիրելով հաշտության:

Բարբը լավ էին հասկանում, որ այդ հանկարծակի փոփոխության պատճառը դաշնակցության Բաքվի կազմակերպության փորձություններն են: Անանիա եպիսկոպոսը պիմեց Հ. Յ. Դ. կոմիտեին՝ խնդրելով նախահարձակ չլինել և ամեն ինչ անել կախվել մարերու համար: Կոմիտեն անմիջապես պատասխան նամակ ուղարկեց եպիսկոպոսին, ուր ասված էր, թե նախահարձակը հայերը չեն ելել, որ նրանք ամբողջ երկու օր միայն պաշտպանվել են, և որ՝ եթե թուրքերը

ցած դնեն զենքերը, ապա նույնը կանեն նաև Հայերը: Միա-  
ժամանակ ասվում էր, որ եթե թուրքերը շարունակեն Հար-  
ձակումները, ապա ավելի ուժգին հակահարված կստանան:

Թուրքերը, սակայն, պիտեյին իրենց խոստումը՝ Բաղար-  
նայա փողոցի վրա ավերելով ու թալանելով խանութները:  
Նրանք մրջյունների պես ներս էին խուժում, հափշտակում,  
ստանում ու սեղափուրում ապրանքը և նորից հետ վազում՝  
թալանի: Կողոպտիչները կարծես մրցում էին իրար հետ,  
միմյանցից խլում ապրանքը, շատ հաճախ լրար պուխ  
ջարդում:

Հայ մարտիկներն անմիջապես դուրս նետվեցին իրենց  
զինքներից և քնցին խուժանին: Զորքը, որ մինչ այդ լուռ  
հանդիսասուեսի դերում էր, այժմ կրակ բացեց, բացյ ... Հայ  
մարտիկների վրա, որոնք կարողացան խույս ստալ և անհե-  
տանայ:

Կռվիների բովում ամեն ժամ ծնվում էին նորանոր խո-  
նարհ հերոսներ, որոնցից շատերը լուռ ու անխոս կասալում  
էին հիացմունքի արժանի գործեր:

Երեկոյան հաջողից թաքստոցից դուրս հանել դաշնակ-  
ցության պահեստում դեռևս մնացած բոլոր հրացանները:  
Զինապահեստը, ինչպես ասվեց, զտնվում էր լճորքական  
թաղում, բախկան հեռու: Անհուն նախաձեռնություն ու մա-  
հաբել համարձակություն էր պեսը այնտեղից զենքերը բե-  
րելու համար: Ընդ վտանգավոր ձեռնարկի մասնակիցներից  
մեկի մասին ականատեսը պատմում է հետևյալը.

«Այդ նեղ ժամին մեր սաջև հայտնից մի հայ զինվոր, մի  
խելճ ու կրակ մարտ, որ իր մտքերը հապիվ էր կարողանում  
արտահայտել: Փորձի համար առաջարկեցինք նրան գնալ  
մեր պահեստը և բերել մեկ հրացան: Գնաց և հաջողությամբ

րերեց մեկը: Նորից գնաց և րերեց Լյի մի քանիսը: Ոգևորված՝ մեր բուռն երախտագլխաությունն էլինք հայսնում նրան, բայց նա կարծես չէր լսում և առանց մի խոսք արտասանելու հեռացավ ...: Մի անգամ ես ինձ վիճակվեց սեռանել պարտքի այդ անխոս վիճվորին. մի խելո՞ւ հայ մարդ նրան պատմում էր, որ կրակը լավում է իր սունը, և եթե շուտ օգնություն չհասնի, ապա երեխաները, որոնք բարձրացել են կտուրը, պիտի այրվեն: Ջինվորի աչքերը լցվեցին արտասուքով, և նա գնաց այդ մարդու հետ: Երեխաները փրկվեցին: Չվրտեմ, էլ ի՞նչ եղավ, ո՞ւր գնաց վրեժագր...»<sup>1</sup>:

Բերված հրայանների հանձնվեցին փաստհեղի կախյաների: Էրմենիքենդից (Հայոց գյուղ) այդ հրացաններով դինված հայ երիտասարդների մի խումբ Մկրտիչ Մելիք-Աղամալյանի գլխավորությամբ ուղղվեց դեպի Ղուրի Մեյդան՝ Բաքվի թուրքական միջնաբերդը, և կասաղի հարված հասցրեց ջարդարարներին:

Հայ երիտասարդների հարձակումը շարունակվում էր: Գիչերվա մոտավորապես ժամը 12-ին մարտական խմբերը մտան թուրքական մյուս թաղերը՝ փրկելու այնտեղի հայերի կյանքը: Այդ պահին հայի փրկությունը միայն հայից պիտի գար:

«Հրայանային կեսպիչերային այդ համապարկերը, - գրեց է Ա. Գյուլխանդանյանը, - մեր ընկերների խրոխտ, հաղթական բացականչությունները՝ «Հայե՛ր, զայիս ննք Ձեզ աղասելու, մի՛ հուսահատվեք», ստարածվում էին հայոց փողոցից շատ հեռուները՝ հույս և կենդանություն ներշնչելով երեք օր

---

<sup>1</sup> «Դրոշակ», № 4 (157), ապրիլ, 1905, էջ 59.

ստույունի ժամեր անցյալացրած հագստախոր հայերին»<sup>1</sup>:

Այնպես որ, փեսայվարի 8-ի լույս 9-ի գիշերը քաղաքի 4/5 մասը մաքրված էր վինված խուժանից, համալոյա բուրդ կարևոր պիլքերն անցել էին հայերի ձեռքը, վերջ էին գտել թալանն ու ջարդերը: Այդ նույն գիշերը զանազան դիրքեր վտխալուկեց պզալի քանակի ռազմամթերք, ջուկասները համարվեցին նոր մարտիկներով:

Բայց թուրքական հարձակումների պես շարունակվում էին նիկոյանակայա փողոցի վերնամասերում և դրանց հարակից Շամախինրա թաղում ու Բերբարտարում: Տեսնելով, որ հայկական կենսություններ թափանցելու բուրդ վտրվելու ձախուղվում են, թուրքերը շարունակում էին բարբարոսություններն իրենց թաղերում ապրող հայերի նկատմամբ:

Քաղաքայիններից մեկը հետադարձում իր վկայություն մեջ պրել է, թե ինքն այդ գիշեր մի սպայից լսել է թալանով դրաղված թուրքերին ուղղված հետևյալ խոսքերը. «Պարոններ՛ր, մենք ձեզ ընդամենը երեք օր ենք սովել շփանալու և չարածճխություններ անելու համար: Հերիք է արդեն»<sup>2</sup>:

Չորրորդ օր, փետրվարի 9 (22), չորեքշաբթի:

Այդին չորեքշաբթի տասալուսյան բուրդին սղարդ էր, որ հայերը ոչ միայն խլուկախաբար պաշտպանվում են, այլև ուժգին հակահարվածներ են հասցնում, ջարդում ու փախուստի մասնում մարդասպաններին:

Փետրվարի 9-ի ամենամեծ տղերսբությունը ծավալվել էր Շամախինկայի Ղուրա հրապարակի շրջանում: Այստեղ էր

<sup>1</sup> Ա. Գյուլիսանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. Ա, էջ 43:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 137, թ. 43:

գտնվում հարուստ հայ վաճառական Բայարեկ Լալանի բազմահարկ հսկա ապարանքը՝ բազմաթիվ խանութներով: Հրապարակի վրա իշխող այդ հոյակապ տունը վաղուց էր շարժում թուրք միլիոնատերերի նախանձը՝ չխուսելով արդեն փողոցի թաղանջիների մասին:

Դեռ խժուժությունների երկրորդ օրը՝ փետրվարի 7-ին, թուրքերը հրացանային կրակի տակ Լին առել Լալանի տունը, որ շարունակվեց նաև փետրվարի 8-ին: Այդ երկու օրերին՝ ամբողջ 15 ժամ, Լալանը հեռախոսով անդադար խոսում էր քաղաքի մի այլ շրջանում ապրող իր ազգական Կարապետ Լալանի, ուրիշ հարազատների, ծանոթների, երկրորդ թաղի ոստիկանապետի, նաև նահանգապետի հետ և օգնություն աղերսում: Բայց ոչ ոք օգնություն չեկավ, իսկ ճիվաղ նահանգապետը սրտտախտանեց, թե տան մեջ չըջափակվածները ուղղակի չափազանցնում են դրուժյունը: Երբ փետրվարի 8-ի երեկոյան կտրեցին Լալանի տան հեռախոսավիճը, վրկուժյան աղաղակները մնացին օդից կախված<sup>1</sup>:

Վերջապես փետրվարի 9-ի ստավոյան՝ ժամը 10-ի կողմերը, Լալանի տան մոտերքում հայտնվեց ինքը՝ նահանգապետը: Տան ներսում փակված դժբախտների հոգում մի պահ փրկություն հույս առկայծեց: Բայց իզուր: Նահանգապետը սկսեց մեղադրել Լալանին՝ ասելով, թե նա, իբր, սնկից կրակում է անմեղ ու անվեն թուրքերի վրա, որոնք իրեն տեղեկացրել են, թե տան նկուղում ցեմենտի 10 տակառների մեջ պահվում են փամփուշտներ և ուռմբեր: Լալանը նահանգապետին պատասխանեց, որ իր ստանը ոչ մեկը վենք

---

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 137, թթ. 5, 6:

չունի, և դրանում համոզվելու համար լավ կլիներ խուզարկում կատարել: Բայց դա նահանգապետի հաշիվների մեջ չէր մտնում, ուստի նա թողեց ու հեռացավ: Թուրք խուլի-պանները սանձարձակ ամբոխը, քուսեպնոբաժ նահանգապետի այդ վարմունքից, վճռական զործողությունների անցավ: Մարդասպանները գրոհեցին տուն և ներխուժելով կուսուրեցին այնտեղ պատասպարված սարսավահար բուրբ հայերին, այդ թվում Լալանի եղբորը՝ ընտանիքով հանդերձ: Իսկ տանտիրոջն ու նրա տիկնոջը քարչ տալով փողոց՝ դնդարահարեցին<sup>1</sup>:

Ռուս Օրեստ Սյոմինն այսպես է նկարագրել այդ ելու-նագործությունը. «Լալանը գնում էր առջևից: Հանկարծ որոտացին զնդակները: Նա վիրավորված վայր ընկավ, բայց չարտնակում էր սալալ չորեթաթ: Կինը վազեց դեպի ամուսինը և իր մարմնով ուղում էր նրան պաշտպանել ոճրագործների զնդակներից: Քսանից ավելի զնդակներ տեղացին կնոջ մեջքին: Երկու ձեռքերը շարժելով օդի մեջ՝ կինը վայր ընկավ երեսի վրա»<sup>2</sup>:

Հալան ամուսիններին սպանելուց հետո թաթարները նրանց դիակները շարժեցին չքամուսթից ներս, ապա հյուբհեցին տունը:

«Երբ այրվող տանը մոտեցան մոտ 30 կազակներ, նկուղային հարկից դուրս ցատկեց մի հայ, շուրթից դատելով՝ պուլլացի և նեսովեց դեպի կազակները՝ հույս ունենալով, որ նրանք կպաշտպանեն իրեն, բայց կազակներից մեկը մի

<sup>1</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, Թղթ, 237, վավ. 57, ԹԹ. 5, 6:

<sup>2</sup> “Новое обозрение”, 10 февраля 1905 г.



մուրճաձև երկաթի հարվածով նրան գետին սապալեց: Մարտավիյ խենթացած դժբախտ պուլայլին նետվեց վողոցի հանդիպակաց կողմը, դեպի Ջուևի տան մուտքը, որի մոտ կանգնած էին մի քանի վինվորներ՝ Սալյանի գնդի սպա, փոխկապիտան ներոցկու գլխավորությամբ: Ջինվորները սվինները դեմ տվեցին գյուղացուն: Այնուամենայնիվ նա խցկվեց մուտքից ներս, բայց շուտով դաները բացվեցին, և վինվորները, նրա վզակովին հասցնելով, դուրս նետեցին: Գյուղացու վրա տեղացին կրակոցներ: Նա նորից վազելով մտավ մուտք, բայց դարձյալ դուրս հրեցին: Արդեն դաշտնահար՝ նա ելլուով անգամ նետվեց դեպի դուռը, բայց այդ պահին թուրք ամբողջ հավաքակեց նրան և սառացիորեն հուշտեց՝ երկու քաղաքապահ ոստիկանների խրախուսիչ գոչումների ներքո:

– Խփի՛ր էդ հայ շանը»<sup>1</sup>:

Լալաևի տան հրդեհի ժամերին կրակի մատնվեց նաև նույն հրապարակում գտնվող հայտնի վաճառական Թաթույանի տունը՝ ընտանիքով հանդերձ: Արամաստեղը սրտամուժ էր, թե ինչպես քաղաքապահ ոստիկանը դուրսերով մարտ էր մոտեցնում թուրքերին՝ չենքը հրդեհելու համար՝:

Տարաբախտ Լալաևների և Թաթույանների տների հետ կապված ողբերգությունը Բաքվում 1905 թ. փետրվարին տեղի ունեցած չորսօրյա արյունալի ջարդերի վերջին արարն էր:

Մուսուլման խողաղ բնակչության մեծ մասը ջարդերին վերաբերվեց նույնպիսի սարսավով, ինչպես և քրիստոնյաները:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 1, գ. 383, թ. 30:

<sup>2</sup> Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ, 237, վավ. 57, թ. 4:

Չորսօրյա բնդհարումները մնայել էին հետևում, և Հիմա կովուլ կողմերից յուրաքանչյուրը հաշվում էր իր մարտկալին կորուստները, իսկ բոլորը միասին ի մի էին բերում քաղաքին հասցրած հսկայական նյութական վնասը:

Պատմական աղբյուրներում երկու կողմերի կորուստների մասին բերված են իրարից խիստ տարրերվող թվեր: Բողջեիկ Ֆիլիպ Մախարաձեն չորսօրյա կոիմներում սպանվածների ու վիրավորների թիվը նշել է 1000-ից ավելի<sup>1</sup>: Գրական մի ուրիշ աղբյուր վկայում է, որ այդ օրերին սպանվել է 750 և վիրավորվել 830 մարդ<sup>2</sup>:

Տարբեր թվեր են հայտնի սենատոր Կուլգմինսկին, Բոգդան Դոլոխանյանը, Դավիթ Անանունը, հովակ Ստեփանյանը, Արրահամ Գյուլխանդանյանը և ուրիշներ: Սպանված հայերից մի քանի սասնյակը օղջ-օղջ այրվել էր հրվեհված տներում: Ջոհված հայերի թվում շատ էին կանայք, կրկնյաներ, ծերեր: Թուրքերից սպանվածների թվում եղել էր երկու կին՝ այն էլ պատահական գնդակներից, իսկ թուրք երեխաներ չէին գոհվել:

Հայերի կորուստների շատ լինելը բացատրվում է երկու հանգամանքով. ա) ամբողջ մեկուկես օր՝ փետրվարի 6-ին և հաջորդ օրվա մինչև կեսօրը, թուրքերը հայերի արյունը հեղում էին, կարելի է ասել, անպաստիժ, բ) ջարդի բոլոր չորս օրերին թուրքերը հաշվի չէին առնում, թե իրենց ձեռքն ընկած սարաբախտ հայերը կանա՞յք են, կրկնյանե՞ր, թե՞ ծերեր: Ի սարբերություն նրանց՝ հայ մարտիկները միայն

<sup>1</sup> Տե՛ս Փիլիպ Մախարաձե, *Очерки Революционного движения в Закавказье*, Госиздат Грузии, Тбилиси, 1927, էջ 300:

<sup>2</sup> Տե՛ս *Революция и Р. К. П.*(6). в материалах и документах, (*Хрестоматия*) том третий, 1905 год, էջ 435:

բաց կոպում էին հակադարձում ջարդարարներին:

Մեծ էին նյութական կորուստները: Թալանի մասնաված 138 խանութներից և արհեստանոցներից 97-ը պատկանում էր հայերին<sup>1</sup>: Թուրքական չրջանների բոլոր հայկական խանութները թալանվել էին, մինչդեռ հայկական չրջանների մուսուլմանները խանութները և արհեստանոցները համարյա չէին տուժել: Հայերն իրենց թաղերում արգելել էին թուրքերի խանութների թալանը և հրդեհը: Թուրք խանութպանները ապշած նայում էին իրենց խանութներին, ամեն բան տեղն էր, ոչինչ չէր տարվել և չէր ավերվել:

Հայերի կորուստները շատ ավելին կլինեին, եթե նրանք արագ չկազմակերպվեին և արժանի հակահարված չստային դինված խուժանին: Չէր հրդեհվել թուրքի պատկանող ոչ մի տուն:

Դիմադրություն կազմակերպման գործում անգնահատելի եղավ դաշնակցությունը Բաքվի կազմակերպությունները:

Հայերի ինքնապաշտպանության փորձի պիտավոր կազմակերպիչը, ինչպես ասվեց, հին հայրուկ, ուժեղ կամքի և բնական խելքի տեր, դարաբաղցի նիկոլ Դումանն էր (նիկոլայ Տեր-Հովհաննիսյան): Դժվարությունները նրա հետ կլիսում էին Մկրտիչ Աղամալյանը (Սահրատ), Աբրահամ Գյուլխանդանյանը, Մարտիրոս Չարուխչյանը:

Ընդհարումների օրերին թրժվեցին տասնյակ խիզախ մարտիկներ՝ Հմայակ Չանփոյադյանը, Համբարձում (Համբրի) Բալայանը, Հովհաննես Քոչարյանը (Շամախեցի Իվան), Ղաչաղ Ասլանը, Գասպար Տեր-Մկրտչյանը, Վահան Մինա-

---

<sup>1</sup> Տե՛ս Ա. Գյուլխանդանեան, Հայ-թաթարական ընդհարումները, հատ. Ա, էջ 55:

խորյանր, Թաղևոս Ամիրյանր, օրիորդ Շագիղանյանցր, տիկ. Շեկ-Հովսեփյանր, տիկ. Մարգարիտ Մելիք-Բեգլարյան-Օհանյանր, տիկ. Աննան, Փոքրիկ Ղաղարը (Ղաղո), Քուրդ Արսենր, Մոկացի Գրիգորր, Առյուծ Ավագր, Գապոն, Փոքրիկ Սերգեյը (Աղասի), Շամիրը և շատ ուրիշներ:

Զի կարելի մտապայտության սուղ այն ջանքերը, որ ընդհարումների օրերին և դրանից հետո ցուցարներեցին Բաքվի մի քանի մեծահարուստ, անվանի հայեր: Այդ օրերին իրենց հասկապես արվաբար պահեցին քաղաքի աչքի ընկնող փաստարաններից և նավթարդյունարերողներից Բոզղան Դոլուխանյանր, նավթային ընկերության վարիչ, բորսայի նախագահ, ինժեներ Ստեփան Թաղիանոսյանր, քաղաքի բուրժուական մտավորականության խոշոր ներկայացուցիչներից՝ Բաքվի տեխնիկական ընկերության նախագահ, Բաքվի հայոց կուլտուրական ընկերության հիմնադիր Կոնստանդին Ռատիսյանը, նավթային ընկերություններից մեկի վարիչ Հայկ Տեր-Միրայեկյանր: Նրանք ամեն բան անում էին աջակցելու դեբախասության մեջ հայտնված իրենց ազգակիցներին, նաև մեծ դեր խաղացին քաղաքում խաղաղությունը վերահաստատելու, հայերի և մուսուլմանների միջև տանդի հարաբերություններ հաստատելու գործում:

Տալմաստալի այդ օրերի լրատարձությունները հայերին ստիպում էին պատրաստ լինել պիմակայելու հնարավոր նոր վտանգները:

\* \* \*

Բաքվի 1905 թ. փետրվարյան արյունալի իրադարձությունները լայնորեն լուսաբանված են հուշագրություններում և պատմական գրականության մեջ: Այժմ դրանց պալիս

են լրացնելու հազվագյուտ այն լուսանկարները, որոնք առաջին անգամ հրատարակում ենք սույն համատուտ ուսումնասիրությունների հետ:

Ինչպե՞ս են այդ լուսանկարները հայտնվել ինձ մոտ:

Արցախյան շարժման սկզբին Ազատութեան հրատարակում սեղի ունեցած հերթական հանրահավաքի ավարտին ինձ մուսեցավ ամբողջովին սև հագած, համարյա լո՞ւ սարիքի մի կին: Ծանոթացանք: Պարզվեց, որ նա նույնպես գործսեցի է, Քարահունջ գյուղից: Տեղափոխվելով Գորիս քաղաք՝ նա այրուեղ ամուսնանում է հեռավոր սարիների լո՞ւ դպրուցական մտերիմ ընկերոջ՝ Վարդան Տոտոյանի հետ: Տարիներ անց նրանք տեղափոխվել և հաստատվել էին նոր Հաջն նորաստեղծ ավանում:

Բազմանորամ ընտանիքում էլ մեծուցել նրանց միակ սպուզավակը՝ էդիկը՝ Արցախյան շարժման առաջին զոհերից մեկը, եթե ոչ առաջինը: Հայրենասիրական բուռն զգացումով սողորված հայորդին սր առաջ ձգտել էր մեկնել Արցախ և պաշտպան կանգնել նրա հերոսական ժողովրդին, բայց չէր կարողացել զենք ձեռք բերել, ուստի ուղչել էր ինքնաչեն զենք ստեղծել: Փորձարկման ժամանակ այն պայթել էր հայրենասեր զավակի ձեռքերի մեջ և նրան զրկել կյանքից:

Փառանձեռն այդ մասին ինձ պատմում էր՝ հազիվ զսպելով հեկեկանքը: Ձգիտեի՝ ինչպես փոքր-ինչ սփոփել լիրախա մոր սիրելիական վիշտը:

Երբ փոքր-ինչ հանդարտվել էր, Փառանձեռն ինքը փոխեց զրուցի ուղղությունը՝ ասելով. «Գիտեմ, որ Դուք պատմարան եք, ուստի կարծում եմ Ձեզ կհետաքրքրի այն, ինչի մասին պիտի խոսեմ»: Եվ նա պատմեց, որ 1905 թ. փետրվարյան ջարդերի օրերին հայերի սպանությունները,

երանց աներվի հրդեհումների սոսկալի սեսարանների մի մասը ֆուտովավերագրերի սեւքով գանվում է իր մոտ, որոնք այդ արյունամած օրերին նկարահանել էր ժամանակի Բաքվի հայտնի յուսանկարիչներից մեկը՝ ծննդով Գորիսի չրջանի Քարահունջ գյուղից Աղաջան Ալավերդյանը (զրոզ, հրապարակախոս Գաբրիել Արեւյանի հորեղբայրը): Կոտորածներից հետո նա վերադառնում է հայրենի գյուղ, բայց այստեղ չի հարմարվում կյանքի պայմաններին և շատ չանցած ընտանիքով տեղափոխվում է Թիֆլիս ու հաստատվում այնտեղ: Մինչ այդ Բաքվի ջարդերը պատկերող իր յուսանկարները նա գյուղում ի պահ է տալիս Փառանձեմի հորը՝ միաժամանակ զգուշացնելով դրանք ցույց չսուլ ոչ ոքի, քանզի չեն համապատասխանում հայ-ադրբեջանական «եղբայրական բարեկամութեան» խորհրդային սկզբունքին: Տարիներ անց՝ մահվանից առաջ, հայրը Փառանձեմին է փոխանցում թվով 31 ֆոտովկայութիւնները: Իրանը հանձնելով մեղ՝ Փառանձեմն ասաց, թե վաղուց մահացած նկարչի դուստրը, որքան գլխի, կենդանի է, և հնարավոր է, որ նրա մոտ պահպանված լինեն ուրիշ լուսանկարներ ևս: Եվ տվեց նրա Թիֆլիսյան հասցեն:

Թիֆլիսում ելած ժամանակ՝ 1989 թ., ուլլիկիցի 80-ամյա Նվարդին, որին այսօր էլ, շատ տարիներ հետո, հիշում եմ ևրախտագիտութեամբ: Նա ինձ տրամադրեց փետրվարյան ջարդերը պատկերող իր մոտ պատահաբար դեռ մնացած երկու լուսանկար:

Փառանձեմի և Նվարդի կողմից ինձ հանձնած լուսանկարները երկար սարլիներ մնացել էին լամ անձնական արխիւվում: Այժմ դրանք հրատարակում ենք ստաջին ամբամ:

Ախտամարով ենք նշում, որ լուսանկարիչը ժամանակին նկարները վրա, բացատրութեամբ չորսի, նշումներ չի կատարել:


**ԲԱՔՎԻ ԶԱՐԴԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**




















Մեծահարուստ Լարսեի տունը բակի  
կողմից: Ջարդից հետո



*Մեծահարուստ Լաբանի այգիված տունը  
Նախառային ճարտիչ*








































Բարեգործական ընկերության  
կողմից այլուրի բաժանում տուժած  
հայ քառամիջերիս




























Այսպիսի տունն, որի բանրան  
սպանվել է ինքը հայ



**ՀՐ. ՄԻՄՈՆՅԱՆ**

**ԱԳՐԻՔԵՋԱՆՑԻՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ,  
«ՀԵՐՈՍԱԿԱՆ» ԷՋԵՐԻՑ ՄԵԿԸ  
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ**

**Խմբագիր՝ Լ. Ավետիսյան  
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումզյանի**

**Տպագր. 5.25 մամուլ: Թուղթ՝ Կավճապատ:  
Տպագրությունը՝ օֆսեթ:  
Տպաքանակ՝ 300:**